

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ, ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆՑ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, երեքշաբթի:

Սրբալույս մեռոնի օրհնության նվիրված հանդիսությունից երկու օր հետո, նույն խանդավառությամբ և նույն տոնական տրամադրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակը:

Վեհարանի հանդիսությունների դահլիճում հավաքվել են Հայ Եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները ներքին և արտասահմանյան թեմերից, քույր Եկեղեցիների պատգամավորները, Մայր Աթոռի միաբանության անդամները և պաշտոնեությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության աշխատողներ և սփյուռքահայ պաշտոնական հյուրեր:

Հանդիսությունը բաց է անում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը.

«Վեհափառ Տեր,

Մեծահանդես տոն է այսօր: Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը ցնծությամբ կտոնեն Նորին Սուրբ Օծության՝ Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի Ամենայն Հայոց ծննդյան 75-ամյակը, քահանայական ձեռնադրության 40-ամյակը և հայրապետական օծման և գահակալության 28-ամյակը: «Ուրախ լեր Ս. Եկեղեցի», ցնծա հայ ժողովուրդ: Արդարև, ուրախ է Հայ Եկեղեցին ու կցնծա հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, վասնզի 28 տարիներե ի վեր Ս. Լուսավորչի Աթոռին վրա բազմած է արժանավորապես «Հայրապետ սուրբ և անբիծ, նման մեծի Մովսիսի, սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ Հայաս-

Գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյան



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ
ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

տանեայց»: Պողոս առաքյալի խոսքերը կրկնելով՝ «Զի այսպիսի վայել էր մեզ՝ քահանայապետ սուրբ և անմեղ, անարատ, կատեալ ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս» (Երբ. Է 26):

Նորին Սուրբ Օծությունը, օժտված աստվածատուր շնորհներով, եղավ իրավամբ հավատքի, բարության և հայրենասիրության ու խաղաղության առաքյալ մը Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի համար: Ան եղավ լավատես ու պայծառատես հանդեպ հայ ժողովուրդին և հայրենիքի լուսավոր ապագային: Անիկա եղավ Ներսես Բ Շինող հայրապետը՝ վերաշինելով ու պայծառացնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայաստանի բազմաթիվ եկեղեցիներն ու վանքերը: Ան եղավ Մովսես մարգարե հայ ժողովուրդի՝ ի սփյուռս աշխարհի ցրված իր զավակները դեպի հայրենիք առաջնորդող՝ Սինայի անապատեն դեպի Ավետյաց երկիրը հայոց:

Նորին Սուրբ Օծությունը առաջին հայրապետը եղավ, որ իր օծումեն անմիջապես հետո ճամփա ելավ դեպի գաղթաշխարհ՝ Լուսավորչի լույսը և Հայաստանի սերը տանելու իր պանդուխտ զավակներուն:

Անիկա այցելեց քրիստոնյա աշխարհի մեծ կեդրոնները՝ Կ. Պոլիս և Հռոմ, այցի գնաց գրեթե կրոնական բոլոր եկեղեցիներու պետերուն անոնց մասնավոր հրավերովը և ծանոթացուց Հայ Եկեղեցին օտարներուն: Եվ անոնք եկան Հայաստան, տեսան փառավոր Սուրբ Էջմիածինը և ծաղկյալ Հայաստանը:

Նորին Սուրբ Օծությունը, ըլլալով ի սկզբանե դաստիարակ, մեծ գուրգուրանք ցույց տվավ հոգևոր ճեմարանին՝ ստանձնելով սարկավագներու հոգևոր դաստիարակությունը:

Նորին Սուրբ Օծությունը եղավ բախտավոր Հայրապետ, ապրելով և իրագործելով խաղաղության շրջանի մեջ և վայելելով հայրենի կառավարության բարյացակամ օժանդակությունը:

Վեհափառ Տեր,

Այսօր եկած են Ձեր հոգևոր զավակները, ինչպես նաև քույր Եկեղեցիներու պատգամավորները՝ իրենց սրտագին հարգանքը մատուցանելու Ձեզի Ձեր ծննդյան, քահանայագործության և հայրապետական եռյակ հոբելյաններու առթիվ:

Մենք ամենքս ալ ի սրտե կմաղթենք Ձեզի Աստուծո օգնականությունն ու երկար. քաջառողջ և արդյունավետ պտղալից տարիներ, իբրև գլուխ և հովվապետ հայ հավատացյալ ժողովուրդի»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի, քահանայական կոչման 40-ամյակի և գահակալության 28-րդ տարեդարձի առթիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը հետևյալ ընդարձակ զեկուցումով.

Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Վեհափառ Տեր,

Ամենապատիվ Պատրիարք սրբազան հայր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,

Մեծարգո Տիար Ռ. Պարսամյան և Վիկտոր Վոլոդին,

Հարգարժան պատգամավորներ, հյուրեր և սիրելի ներկաներ.

Այս տարի, սեպտեմբերյան այս օրերին, լրանում է Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 28-րդ տարեդարձը, քահանայական կոչման 40-ամյակը և կենաց 75-ամյակը:

Այս առթիվ Գերագույն Հոգևոր Խորհուրդը ինձ վրա քսաղցր պարտականություն դրեց, հոբելյանական այս հանդիսավոր նիստին, ներկայացնելու Նորին Սրբության ծավալուն աշխատանքները անցնող 28 տարիների ընթացքում:

Վեհափառ Հայրապետը ծնվել է Բուխարեստում 1908 թ. սեպտեմբերի 20-ին: Ծննդավայրում իր միջնակարգ կրթությունն ստանալուց հետո, ուսումը շարունակել է Բուխարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում՝ ավարտելով այն 1936 թվին: Համալսարանական ուսումնառության տարիներից սկսած և հետագայում էլ մինչև հոգևոր կոչում ստանալը՝ 1943 թվին, նա եռանդով նվիրվել է կրթական ու հրապարակագրական աշխատանքի:

1943 թ. սեպտեմբերի 30-ին ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական Աթենքում և ապա ընտրվել Ռումինիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ: 1943—44 տարիներին հետևել է Բուխարեստի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դասընթացներին:

1951 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ երջանկահիշատակ Տ. Գևորգ Զ կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս և ծառայել Ռումինիայի հայոց թեմում առաջնորդական պաշտոնով մինչև կաթողիկոս լինելը: Այդ տարիներին ամրապնդվում է նրա ղեկավարած թեմի կանոնական կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մայր հայրենիքի հետ:

1955 թ. սեպտեմբերի 30-ին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը Տ. Վազգեն Պալճյան եպիսկոպոսին ընտրում է ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Մի քանի օր հետո, հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների մասնակցությամբ, կատարվում է Հայոց Հայրապետի կաթողիկոսական ձեռնադրության և օծման արարողությունը, իսկ հետևյալ օրը բացառիկ հանդիսավորությամբ կատարվում է նրա գահակալության հանդիսությունը:

Այսպիսով, Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական Աթոռի վրա է բազմում Հայ Եկեղեցու 130-րդ հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը:

Հանձին Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, Հայաստանյայց Եկեղեցին, համաշխարհային Բ պատերազմի արհավիրքներից վիրավոր, ունեցավ իր արժանավոր Հովվապետը՝ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ցրված իր ժողովուրդը իր հովանու տակ միացնելու և հոգեպես մխիթարելու առաքելությամբ:

Անցնող 28 տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետը գրոց հիշատակության արժանի իր գործունեությամբ, որպես խոհուն և անձնվեր հոգևորական, իր անձի շուրջ ստեղծեց մեծ պատկառանք, իրավ հեղինակություն և դարձավ Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի սիրելի Հայրապետը: Նրա ոգեշնչող անձնավորությունից ճառագայթող լույսը ջերմացրել ու ջերմացնում է ողջ հայության սիրտը՝ կապելով նրան Ս. Էջմիածնին և հայրենի հարազատ հողին:

Հայրենի հողի վրա ամրորեն դրած իր ոտքերը՝ Վեհափառը կերպարանափոխեց Մայր Աթոռը. անցնող 28 տարիների ընթացքում, Մայր տաճարից մինչև միաբանական շենք. Ղազարապատից մինչև նոր Վեհարան, հին Վեհարանից մինչև Գանձատուն, բազում շինություններ կառուցվեցին, վերակառուցվեցին կամ վերանորոգվեցին և նրա ճաշակով գեղեցկացան անօրինակ կերպով:

Հոբելյար Հայրապետը իր հայրական հոգատար սրտով, իբրև Հովվապետը հայոց, հասավ նաև սփյուռքին, իր այցելությունների միջոցով տարավ Սուրբ

Էջմիածնի օրհնությունն ու պատգամը տարագիր հայությանը, տարսավ հայրենիքի կենարար շունչը և իբրև Այրարատյան աղավնի, խաղաղության ոստը ձիթենու իր ձեռքին, հասավ մինչև Ատլանտյանի և Խաղաղականի ափերը՝ մխիթարելու իր օրդիներին հայրենական քաղցրություններով: Եվ նրա պատ-

Գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոլսայանը վեկուցագիրն ընթերցելիս

գումները բյուրեղացան սփյուռքի հայության գիտակցության մեջ, դարձան պաշտամունք Սուրբ Էջմիածնի և հայրենի իրականության հանդեպ:

Հոբելյար Հայրապետի գահակալության 28-ամյա բեղուն շրջանը ընդգրկում է գործունեության բազմաթիվ բնագավառներ: Այժմ թույլ տվեք համա-

ռուսակի ներկայացնել ձեզ Նորին Սրբության այդ բազմերես և բազմաբովանդակ գործունեության պատկերը իր հիմնական գծերի մեջ:

Նորին Սրբությունը իր գահակալության առաջին օրվանից իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ ստեղծելու խաղաղ և առողջ հիմքերի վրա դրված վսեմական հոգևոր կյանք:

Այս երջանիկ հոբելյանի հանգրվանին, ուրախ եմ արձանագրելու, որ Հայոց Հայրապետը կարողացավ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին ներշնչել հոգևոր կոչման և ազգային առաքելության վսեմ զգացում և Մայր Աթոռի անսասանության և պայծառության հասար կոհվելու գաղափարական բարձր գիտակցություն:

Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում նրա սուրբ Աջով ձեռնադրվել ու եպիսկոպոսական աստիճան են ստացել 50 հոգևորականներ՝

1. Տ. Հնորհք արքեպիսկոպոս Գայուստյան (պատրիարք Թուրքիայի հայոց)
2. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան
3. Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան
4. Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյան
5. Տ. Աստղիկ արքեպիսկոպոս Ղազարյան
6. Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայան
7. Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյան
8. Տ. Բաբկեն արքեպիսկոպոս Ապատյան
9. Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան
10. Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան
11. Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան
12. Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան
13. Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան
14. Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան
15. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գալշնճյան
16. Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան
17. Տ. Եղնիկ եպիսկոպոս Ալնավուրյան
18. Տ. Դարգև եպիսկոպոս Վրթանեսյան
19. Տ. Շավարշ եպիսկոպոս Գոյումճյան
20. Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հսկոբյան
21. Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյան
22. Տ. Բաբկեն եպիսկոպոս Վարժապետյան
23. Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան
24. Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան
25. Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան
26. Տ. Շահան եպիսկոպոս Սվաճյան
27. Տ. Գյուտ եպիսկոպոս Նազգաշյան
28. Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյան
29. Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան
30. Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյան
31. Տ. Հմայակ եպիսկոպոս Ինթոյան
32. Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան
33. Տ. Ներսես եպիսկոպոս Պողապալյան
34. Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան

35. Տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյան
36. Տ. Եղիշե եպիսկոպոս Կիպիրյան
37. Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյան
38. Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան
39. Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյան
40. Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյան

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՍՈՒՅՆ ՑՈՒՑԱԿԻՑ ՎԱԽՃԱՆՎԵԼ ԵՆ՝

1. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան
2. Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան
3. Տ. Եղնիկ եպիսկոպոս Ազնավուրյան
4. Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյան
5. Տ. Շավարշ եպիսկոպոս Գոյումճյան
6. Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան
7. Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան
8. Տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ալանյան
9. Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղալարյան
10. Տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայան
11. Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյան
12. Տ. Բաբկեն արքեպիսկոպոս Ալպատյան

Վեհափառ Հայրապետն իր գահակալության ընթացքում իր շուրջն ունեցավ, իբրև Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ Հանձնախմբի անդամներ, որպես մերձավոր գործակիցներ, թե՛ Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ սփյուռքից և Մայր Աթոռից, և թե՛ հայրենաբնակ վաստակաշատ, անվանի մտավորականներ, որոնք իրենց ամբողջական մասնակցությունը բերեցին Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր ծրագրերի իրականացման գործին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի համալրված ներկա կազմը հետևյալն է.

Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան (ատենապետ)
Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան
Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան
Տ. Շնահե արքեպիսկոպոս Աճեմյան
Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյան
Տիարք՝ դոցենտ Կարապետ Կարսուգյան
դոցենտ Հովհաննես Թոփուզյան
ժող. նկարիչ, ակադեմիկոս Գրիգոր Խանջյան
ճարտարապետ Արմեն Զարյան

Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին ի պաշտոնե մասնակցում են Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը և միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Տիար Պարգև Շահբազյանը:

Գերագույն Հոգևոր Խորհրդին առընթեր գործել է միշտ Վերստուգիչ Հանձնաժողովը, որի կազմում են այժմ՝

Տ. Նարեկ եպս. Շաքարյան
Տիար Եփրեմ Ալեքսանյան
Տիար Մինաս Կարապետյան

Մայր Աթոռի շինարարական աշխատանքներին մարմին տալու համար Հայոց Հայրապետի հրավերով և նրա անմիջական հսկողության տակ Ս. Էջմիածնում կազմվել և առ այսօր գործում է հայրենի անվանի ճարտարապետներից, ինժեներներից և արվեստագետներից բաղկացած գիտական մի հանձնաժողով, որն իր անձնվեր գործակցությամբ կյանքի է կոչում Նորին Սրբության մշակած շինարարական բոլոր ծրագրերը:

Վերոհիշյալ հանձնաժողովի կազմում են՝

1. Դոկտ. պրոֆ. Վարազդատ Հարությունյան (նախագահ)
2. Ակադեմիկոս, նկարիչ Գրիգոր Խանջյան
3. Դոկտ. պրոֆ. Կոստանդին Հովհաննիսյան
4. Ճարտարապետ Բաղդասար Արզումանյան
5. Ինժեներ Կոստանդին Ալթունյան
6. Ակադեմիկոս, դոկտ. պրոֆ. Բաբկեն Առաքելյան
7. Ճարտարապետ Թելման Գևորգյան
8. Մայր Աթոռի գլխ. ճարտարապետ Արծրուն Գալիկյան

Շնորհիվ այդ շինարարական աշխատանքների, անցնող մոտ երեք տասնամյակների ընթացքում Մայր Աթոռում և նրա սահմաններից դուրս վերանորոգվեցին, կառուցվեցին կամ վերակառուցվեցին, վերակարգվեցին Ս. Էջմիածնի Մայր տաճարը, նոր Վեհարանի շենքը, հին Վեհարանի շենքը, միաբանական սեղանատունը, Մայրավանքի նոր վանատունը, Ղազարապատի շենքը, մայրավանքի ողջ շրջափակը, որտեղ և կառուցվեց 1915 թվականի հայկական առաջին ցեղասպանության հուշարձանը, իսկ վերջերս նաև՝ Խրիմյան Հայրիկի հիշատակին նվիրված աղբյուր-հուշակոթողը, վերակառուցվեցին Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Հողակաթ եկեղեցիները, Ս. Գեղարդի և Խորվիրապի վանքերը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Բջնիի և Սիսիանի եկեղեցիները, Դարալագյազի Ս. Խաչ եկեղեցին, հիմնովին վերակառուցվեց Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին, վերանորոգվեցին նաև Երևանի Ս. Զորավոր, Լենինականի, Կիրովականի, Ստեփանավանի եկեղեցիները, ինչպես նաև Թբիլիսիի, Բաքվի, Մոսկվայի և Ռոստովի հայկական եկեղեցիները:

Վերջին տարիներին արմատապես վերակառուցվեցին և վերանորոգվեցին Երևանի Ս. Գևորգ, Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցիները, Հրազդանի եկեղեցին, Արմավիր քաղաքի հպկական եկեղեցին, Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին, Ս. Գայանե վանքի բակում կառուցվեց մի գեղեցիկ աղբյուր-հուշարձան և այլն:

Շինարարական այս ձեռնարկումների մեջ առանձնապես հիշատակելի է Բյուրական գյուղում «Հայկաշեն» հայրապետական ամառանոցի կառուցումը, որի հողամասը վերջերս բարեկարգվեց նոր ճանապարհներով:

Կատարված վերոհիշյալ շինարարական աշխատանքների թվում մասնավոր կարևորությամբ պետք է նշել վերջին տարիներին Մայր Աթոռի շրջափակում բարձրացված «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատան եռահարկ փառահեղ շենքի կառուցումը՝ հայ հին եկեղեցական արվեստի բազմատեսակ գործերին ու նրանց այահպանմանը հատկացված մի գանձատուն, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1982 թվականի հոկտեմբերի 11-ին գանձատան բարերար, Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանի ներկայությամբ:

Շինարարական այս աշխատանքների կգալի մասը հնարավոր եղավ

իրագործել շնորհիվ արտասահմանից ստացված նյութական հատկացումների և առանձին նվիրատվությունների:

Երախտագիտությամբ պետք է հիշել այստեղ Մայր Աթոռի հետևյալ բարերարների անունները, որոնք նվիրաբերել են կարևոր գումարներ.

Միացյալ Նահանգներից

Հ. Բ. Ը. Միություն, Ալեք Մանուկյան, Հայկ Գավուքճյան, Էդվարդ Մարտիկյան, Պետրոս և Հմայակ Սարաֆյաններ, Տատուր Տատուրյան, Հերրի Թադոսյան, Ստեփան Տեր-Գրիգորյան, Հերրի Բըրտ Մովսիսյան, Հրայր Հովնանյան, Հակոբ Տերտերյան, Մարիամ Վիսըս-Նահիկյան, Ստեփան Տեր-Այվազյան, Հայկ Պերպերյան, Սաթենիկ Քյուրքճյան–Կարապետյան:

Ֆրանսիայից

Նուրհան Ֆրենկյան, Արծրուն Զրբաշյան, Մուշեղ Ճիերճյան, Նապոլեոն Պուլլուքյան, Գևորգ Պագըրճյան, Կարպիս Զրբաշյան, Կարպիս Ճնկըտըրյան, Մուշեղ Պետրոսյան, Արշամ Պապայան, Սուրեն և Գուրգեն Գործունայներ, Ժիրայր Մանսուսյան, Զեփյուռ Մեծպահքյան, Վահրամ Դավիթխանյան, Իչկալուցյան ընտանիք, Կարպիս և Սերժ Մանուկյաններ, Տիգրան և Գրիգոր Փստիալլաններ:

Անգլիայից

Աբգարյան Խնամակալություն, Գալուստ Ս. Կյուլպենկյան, Սարգիս Քյուրքճյան, Հռիփսիմե Ռոզ-Թրիքի, Պետրոս Ալեքսյան, Կարո Գրիգորյան, Թորոս Պարսամյան, Հարություն Մութաֆյան, Հայկ Գալուստյան, Գևորգ և Հովհաննես Քյուրքճյաններ, Գևորգ Թահթա, Ստեփան Զարդարյան, Ռաֆիկ Սահակյան, Սեպուհ Ասլանյան:

Արգենտինայից

Հովհաննես և Սարգիս Տիարպեքիրյաններ, Գևորգ Սարաֆյան, Կոպեռնիկ Սեֆերյան, Մարթա Տիարպեքիրյան, Էդվարդ Սեֆերյան, Արամ Իսրայելյան:

Իտալիայից

Երվանդ Հյուսիսյան, Ստեփան Սրապյան, Հայկ և Թորգոմ Ղազարոսյաններ, Օննիկ Մանուկյան, Մարի և Զավեն Մնտիկյան, Հակոբ Թոփալյան:

Սիրիայից

Սուրեն Գալենտեր, Լևոն Յագուպյան, Գառնիկ Յագուպյան:

Լիբանանից

Կրոնասեր Տիկնանց Միություն, Գեղամ և Անգինե Տանձիկյաններ, Սարգիս Սարգիսյան:

Բելգիայից

Ժան Ապաճյան, Մելանկթոն Արսլանյան:

Բրազիլիայից

Գառնիկ Պապարյան:

Ավստրիայից

Ապաւ Վարդյան, Արամ Ութուճյան:

Ավստրալիայից

Հարություն Ակինյան:

Իրանից

Պապիկ-Թովմաս Թովմասյան:

Իրաքից

Ասողիկ արքեպս. Ղազարյան, Տիրան Օհանյան:

Պորտուգալիայից

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն:

Եթովպիայից

Մարտիրոս Տարագճյան, Լևոն Երզնկացյան:

Հունաստանից

Զապել Գալփաքյան:

Վենեսուելայից

Վարդգես Երեցյան:

Շվեյցարիայից

Կարապետ Ղալարյան, Կարապետ Հակոբյան:

Սուդանից

Էդվարդ Ճիհերճյան:

Վեհափառ Հայրապետի գործունեության կարևոր օղակներից մեկը եղավ նաև կազմակերպումը Մայր Աթոռի դիվանատան և տնտեսական-ֆինանսական բաժինների, որոնց գործունեությունը օրավուր ընդլայնվեց ու բարեկարգվեց՝ տալով իր դրական արդյունքները: Նորին Սրբությունը գործիմացությամբ հետևեց Մայր Աթոռի բյուջեի, նրա տնտեսական և նյութական միջոցների լիարժեք օգտագործմանը՝ ուշադիր լինելով, որ շռայլումներ տեղի չունենան:

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռում բացվեցին և սկսեցին կազմակերպված և կանոնավոր կերպով գործել ատաղձագործարանը, ոսկերչական և երկաթագործական արհեստանոցները, ասեղնագործության աշխատանոցը, դերձակատունը մոմաձուլարանը, հին արժեքավոր սրբանկարների վերանորոգման և վերականգման արվեստանոցը, Մայր Աթոռի փոխադրական միջոցների կենտրոնը (գարաժը)՝ մարդատար և բեռնատար բազմաթիվ ավտոմեքենաներով: Այսպիսով, անցնող շուրջ երեք տասնամյակների ընթացքում Մայր Աթոռը դարձավ կազմակերպված հիմքերի վրա դրված մի լուրջ հաստատություն՝ գործունեության բազմաթիվ բաժիններով: Այսօր Մայր Աթոռի պաշտոնեության, արհեստավորների և բանվորների ընդհանուր թիվը հասնում է 250-ի: Ինչ վերաբերում է Մայր Աթոռի ֆինանսական ներկա դրությանը, ապա կարող ենք գոհունակությամբ արձանագրել այստեղ, որ Մայր Աթոռի ներքին եկամուտը 1982 թվականին եղել է 1.466.000 ռուբլի:

Մայր Աթոռի եկամուտների գլխավոր աղբյուրներն են եղել Մայր տաճարը, Վաղարշապատի վանքերը, Արարատյան հայրապետական թեմը, Ս. Գեղարդի և Ս. Խորվիրապի վանքերը, ինչպես նաև Շիրակի, Վրաստանի և Ադրբեջանի թեմերը:

Վեհափառ Հայրապետի գահակալության ամբողջ շրջանում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը եղել է նրա սրտին մոտ հարազատ ուսումնական հաստատություն: Նա միշտ էլ մասնավոր հոգածությամբ և ուշադրությամբ է շրջապատել հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը ոչ միայն որպես Ամենայն Հայոց Հայրապետ, այլ նաև ու մանավանդ, որպես վաստակավոր ուսուցիչ և մանկավարժ, որը երկար տարիներ մանկավարժական, դաստիարակչական հարուստ փորձ է ունեցել հայ կյանքում: Հոգևոր ճեմարանը աբավել կազմակերպված և ուսումնական բարձր մակարդակի վրա դնելու նպատակով՝ Հայոց Հայրապետը, իր գահակալության առաջին օրվանից, աշխատեց ուսումնական այդ հաստատությունը ապահովել նրա կարիքները միանգամայն բավարարող թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական որակյալ դասախոսներով: Այսօր հոգևոր ճեմարանում պաշտոնավարող դասախոսները, գրեթե առանց բացառության, համալսարանական կենտրոններում և գիտական հաստատություններում իրենց մասնագիտական ուսումն ստացած անձնավորություններ են: Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ,

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 75, ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ 40 ԵՎ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28-ԱՄՅԱԿՆԵՐԻ ՆՇՈՒՄԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

հատկապես վերջին մեկ-երկու տասնամյակներում, հոգևոր ճեմարանից շրջանավարտ առավել շնորհալի երիտասարդ հոգևորականներն ուղարկվում են Ռուսաստան, Փարիզ, Լոնդոն, Վիեննա, Գերմանիա, Աթենք՝ հետևելու բարձրագույն աստվածաբանական ուսման և միաժամանակ յուրացնելու անհրաժեշտ գիտելիքներ օտար լեզուներից:

Վազգեն Ա Հայրապետի օրով հոգևոր ճեմարանը տվել է բազում շրջանավարտներ, որոնցից շատերը այսօր, որպես բարձրաստիճան հոգևորականներ, հովվական, թեմական, քարոզչական ու վարչական պատասխանատու ծառայության են կոչվել ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ Հայ Եկեղեցու ներքին և արտասահմանյան թեմերում:

Հայոց Հայրապետը հայ ժողովրդի կրոնա-բարոյական ու ազգային-հայրենասիրական դաստիարակության գործում նշանակալից և պատասխանատու դեր է վերապահել նաև իր անմիջական հսկողության և ղեկավարության ներքո հրատարակվող Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին: Ամսագրի էջերում հեղինակությամբ և ձեռնհասորեն շոշափված ու պարզաբանված են հայ ազգային-եկեղեցական կյանքի բազմաթիվ և բազմատեսակ հարցեր:

1960 թվականին Վազգեն Ա Հայրապետի նախաձեռնությամբ և Միացյալ Նահանգների հայ հավատացյալ ժողովրդի նվիրատվությամբ Մայր Աթոռի հողամասի վրա բացվեց Մայր Աթոռի նոր տպարանը, որտեղ հրատարակվում են «Էջմիածին» ամսագիրը, Մայր Աթոռի տարեկան օրացույցը, Հայոց Հայրապետի արտասահմանյան ուղևորություններին նվիրված հատորները, ինչպես նաև կրոնական, պատմական և հայագիտական բազմաթիվ գրքեր:

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ և հսկողությամբ կատարվեցին նաև հայերեն և օտար լեզուներով «Հայկական եկեղեցիներ» (1970 թ.), «Հայկական խաչքարեր» (1973 թվականին՝ առաջին հրատարակություն, 1978 թվականին՝ երկրորդ հրատարակություն) և «Ս. Էջմիածին» (1981 թ.) գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված ալբոմների հրատարակությունները 50.000 օրինակ տպաքանակով:

Մայր Աթոռի մշակութային հրատարակչական ձեռնարկումների մեջ կարևոր տեղ են գրավում նաև հետևյալ հրատարակությունները.

1978—1979 թվականներին լույս տեսան «Ս. Էջմիածին», «Ս. Գեղարդ», «Ս. Հռիփսիմե» վանքերին և Երևանի Ս. Սարգիս եկեղեցուն վերաբերող գունավոր գրքույկները: 1981 թվականին արտասահմանում գեղարվեստական շքեղ հրատարակությամբ լույս տեսավ Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոսի (Եղիվարդ) «Լուսամատյան» խորագիրը կրող հատորը գունավոր նկարներով, 8000 օրինակ տպաքանակով:

Նույն թվականին Մայր Աթոռի նախաձեռնությամբ և Աստվածաշնչի Միացյալ Ընկերության հրատարակությամբ լույս տեսավ «Նոր Կտակարան»-ի արևմտահայերեն նոր թարգմանությունը 20.000 օրինակ տպաքանակով: Այն նախատեսված է սփյուռքի հայության համար:

1982 թվականին Մայր Աթոռի տպարանից լույս տեսավ «Նոր Կտակարան»-ի ժամանակակից արևելահայերեն գրական լեզվով կատարված նոր թարգմանության երրորդ վերանայված հրատարակությունը 20.000 օրինակ տպաքանակով:

Մայր Աթոռի տպարանում են հրատարակվել նաև «Վազգեն Ա Հայրապետ Հայոց» շարքի հաջորդական երեք հատորները, իսկ բոլորովին վերջերս լույս տեսավ նույն շարքի չորրորդ նկարազարդ հատորը՝ 4000 օրինակ տպաքանակով:

Շուտով հրատարակության կհանձնվի Մայր Աթոռի նախաձեռնությամբ պատրաստված գունավոր ալբոմը՝ «Գանձեր Ս. Էջմիածնի», որը լույս կտեսնի առաջիկա տարի 20.000 օրինակ տպաքանակով:

Ընթացքի մեջ է «Հին Կտակարան»-ի նոր թարգմանությունը արևելահայ գրական լեզվով: Թարգմանությունը կատարվում է Աստվածաշնչի գրաբար բնագրից հայրենի մի խումբ երիտասարդ գիտնականների հավաքական ուժերով: Ամենայն հավանականությամբ այն կավարտվի առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում, կխմբագրվի և այսպիսով կատարված կլինի Վեհափառ Հայրապետի ցանկությունը՝ հայրենի ընթերցողներին տալ Աստվածաշնչի ամբողջական թարգմանությունը ժամանակակից արևելահայերեն գրական լեզվով:

Հայոց Հայրապետի մշակութային գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում նաև Մայր Աթոռում եկեղեցական արվեստի թանգարանների կազմակերպումն ու հարստացումը, հայկական հին ձեռագրերի, հնատիպ գրքերի, սրբանկարների, հին դրամների, հայկական ասեղնագործությունների, գորգերի, եկեղեցական սպասների և հնագիտական ու գեղարվեստական արժեք ներկայացնող այլ իրերի ձեռքբերումն ու պահպանումը:

Մայր Աթոռի մշակութային նախաձեռնությունների թվում հիշատակության արժանի են եկեղեցական, ազգային, մշակութային կարևոր իրադարձությունների և հիշարժան տարեթվերի ոգեկոչումները, որոնք անցնող 28 տարիների ընթացքում տեղի ունեցան Մայր Աթոռում հոբելյանական հանդիսություններով և համազգային մեծ շուքով:

Վազգեն Ա Հայրապետի շուրջ երեսնամյա գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման գործին նրա բերած եռանդուն մասնակցությունը: Խաղաղության ի նպաստ Նորին Սրբության կատարած աշխատանքները լիովին համապատասխանում էին Հայ Եկեղեցու ավետարանական ոգուն և հայ ժողովրդի ու մայր հայրենիքի կենսական շահերին:

Դեռևս 1961 թվականին Պրագայում գումարված խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական կոնֆերանսում Հայոց Հայրապետը իր արտասանած ճառում վեր էր հանում խաղաղության գաղափարը որպես քրիստոնեության գերագույն պատգամ՝ նշելով. «Խաղաղության իդեալը մի ամբողջ գաղափարաբանություն է, մարդկային կյանքը ապրելու և գործելու մի աշխարհայացք՝ էապես քրիստոնեական: Կարելի չէ խաղաղության իդեալը անջատել Քրիստոսի Ավետարանից: Եվ առանց խաղաղության ճշմարիտ խոսքի և կենդանի գործի, դժվար թե կարողանայինք Քրիստոսի հետևորդներ կոչվել: Քրիստոնեությունը ինքը խաղաղության մի առաքելություն է մարդկային աշխարհում: Ընդդիմանալ պատերազմին՝ նշանակում է հպատակվել Աստուծո կամքին»: Ահա այս հավատքով և քրիստոնեական ճշմարիտ ոգով, ավելի քան քառորդ դար շարունակ, Հայոց Հայրապետը իր հեղինակավոր ձայնն է բարձրացրել խաղաղության միջազգային ժողովների և համագումարների բեմերից՝ Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Պրագայում, Հելսինկիում, Բեռլինում և այլուր՝ ի խնդիր խաղաղության, ի խնդիր կինաթափման, ի խնդիր ժողովուրդների բարեկամության և պետությունների միջև խաղաղ, համերաշխ գործակցության:

Խաղաղության պաշտպանության գործին իր բերած կարևոր ավանդի համար և իր ծննդյան 60 և 70-ամյակների առիթով սովետական կառավարությունը Հայոց Հայրապետին պարգևատրեց «Պատվո նշան» և «Ժողովուրդների Բարեկամության» շքանշաններով: Իսկ վերջերս իր ծննդյան 75-ամյակի առթիվ

Վեհափառ Հայրապետը արժանացավ Սովետական Հայաստանի Հանրապետության Գերագույն սովետի նախագահության պատվոգրին:

Արդի ժամանակաշրջանը քրիստոնեական քույր Եկեղեցիների միջև եղբայրական կապերի և ի Քրիստոս սիրո, միության ու համագործակցության ժամանակաշրջանն է:

Հայ Եկեղեցին, հավատարիմ իր նախնիներից ժառանգած քրիստոնեական լայնախոհ ոգուն, ներկա ժամանակաշրջանում ևս շարունակեց և առավել սերտացրեց իր եղբայրական հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ էկումենիկ ոգով:

1962 թվականին Վազգեն Ա Հայոց Հայրապետի ցանկությամբ և օրհնությամբ Հայ Եկեղեցին անդամակցվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, իսկ ավելի ուշ՝ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսին, ինչպես նաև Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսին՝ առաջնորդված տարբեր դավանություն ունեցող Եկեղեցիների միջև բարեկամական անկեղծ կապեր և համագործակցություն հաստատելու մտածումով: Հայ Եկեղեցին իր պատմության դասն փորձով գիտի, որ անհնար է Եկեղեցիների միության իրականացումը եկեղեցական որոշ Աթոռների իշխանության տարածումով այլ Եկեղեցիների վրա, ինչ ձևով էլ այդ լինի: Հայ Եկեղեցին դավանում է քրիստոնյա Եկեղեցիների միությունը՝ Ս. Ավետարանն ընդունելով իբրև հաստատուն վեմ, և քրիստոնեական ընդհանուր Եկեղեցին՝ իբրև կենդանի մարմին, որոնց գլուխն է գտնվում ինքը՝ Քրիստոս: Ահա այս ըմբռնումով մեր Եկեղեցին, Հայոց Հայրապետի գահակալության քսան և ութ տարիների ընթացքում, մասնակցեց ԱՄՆ-ի ազգային Եկեղեցիների համաժողովին (1957 թ.), Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ (1961 թ. Նյու-Դելհի), չորրորդ (1968 թ. Ուփսալա), հինգերորդ (1975 թ. Նայրոբի) և վեցերորդ (1983 թ. Վանկուվեր) համագումարներին, Համա-օրթոդոքս Եկեղեցիների Հռոդոսի ժողովին (1962 թ.), Մոնրեալի «Հավատո և կարգի» չորրորդ ժողովին (1964 թ.), Արևելյան Ուղղափառ հինգ Եկեղեցիների պետերի՝ Ադիս Աբեբայի համագումարին, վերջին տասնամյակներում նաև Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի և Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի համաժողովներին և այլն:

Այնուհետև Հայ Եկեղեցին, Վազգեն Ա Կաթողիկոսի հրահանգով, որպես դիտորդ, մասնակցեց Վատիկանի Բ ժողովին (1963—1965 թվականներին):

Անցնող 28 տարիների ընթացքում Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի միջև կատարվեցին փոխայցելություններ էկումենիկ ոգով, որոնք խորացրին և ամրապնդեցին Հայ Եկեղեցու եղբայրական կապերը քույր Եկեղեցիների հետ: Այս նպատակով Մայր Աթոռ այցելեցին, ի գլուխ եկեղեցական պատվիրակությունների, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետեր՝ հանգուցյալ Տ. Այեքսի և այժմյան Համայն Ռուսաց Տ. Պիմեն պատրիարքները, Վրաց Օրթոդոքս Եկեղեցու հանգուցյալ Տ. Մելքիսեդեկ Գ, Տ. Եփրեմ Բ, Տ. Դավիթ Ե և այժմյան Տ. Իլիա Բ պատրիարք-կաթողիկոսները, Ռումինիայի հանգուցյալ Տ. Ժուստինիան պատրիարքը, Բուլղարիայի հանգուցյալ Տ. Կիրիլ և այժմյան Տ. Մաքսիմ պատրիարքները, Վատիկանի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ կարդինալ Ժան Վիլլբրանդսը (երկու անգամ), Կ. Պոլսի Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ Տ. Էմիլիանոս Դիմիտրիադիս միտրոպոլիտը, Ղպտական Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Ամբա Շենուդա Երրորդը, Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Օրթոդոքս Եկեղեցու պատրիարք Նիկողայոս Զ-ը, Եթովպական Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Աբբա Թեքլե Հայմանոթը, Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու

Տ. Իգնատիոս Դ պատրիարքը, Դամասկոսի Տ. Իգնատիոս Զաքքա պատրիարքը, Լիբանանի Հայ կաթողիկոս համայնքի հանգուցյալ Տ. Իգնատիոս-Պետրոս Բաթանյան պատրիարքը, Հնդկաստանի Արևելքի Մալաբար Եկեղեցու Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Առաջին կաթողիկոսը, Քենթրբերիի արքեպիսկոպոսներ և Հանայն Անգլիայի եպիսկոպոսներ Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը և Ռոբերտ Ռենսին, Վիեննայի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Քոնիգը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղարներ դոկտ. Վիսերտ Հուֆթը, դոկտ. Էուժեն Բլեյկը և դոկտ. Ֆիլիպ Փոթերը, ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ դոկտ. Միլլերը, Հեսսեն Նասաու նահանգի (ԳՖՀ) Ավետարանական-Լութերական համայնքի նախագահ դոկտ. Մարտին Նիմյոլլերը, Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը, Քրիստոնեական Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղարներ դոկտ. Կարոլի Տոթը և դոկտ. Լուբոմիր Մլինժովսկին և այլ եկեղեցական բարձրաստիճան դեմքեր:

Նույն տարիներին Վազգեն Ա կաթողիկոսը ջերմ հարաբերություններ հաստատեց նաև կրոնական այլ համայնքների հոգևոր պետերի, այդ թվում՝ Անդրկովկասի և Ադրբեջանի մուսուլմանների կրոնական վարչության պետ Շեյխ Ուլ Իսլամ Հաքիմ Զադե Դեբիրովի, Միջին Ասիայի Շեյխ Ուլ Իսլամ Բաբախանովի, ինչպես նաև Հորդանանի, Դամասկոսի և մահմեդականն այլ կրոնապետերի հետ:

Բացառիկ նշանակություն ունեցան Հայոց Հայրապետի փոխադարձ հաճախակի այցելությունները ռուսաց Տ. Ալեքսի և Տ. Պիմեն պատրիարքներին:

Նույնքան կարևոր պատմական նշանակություն ունեցան Նորին Սրբության մի շարք ուղևորությունները արտասահման և պաշտոնական այցելությունները քույր Եկեղեցիների պետերին: Այսպես՝ 1961 թվականին նրա այցելությունները Կ. Պոլսում հունաց Տ. Աթենագորաս Տիեզերական պատրիարքին, Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու պետ Տ. Ժուստինիան և ապա Տ. Ժուստին պատրիարքներին, Հնդկական Մալաբար Եկեղեցու կենտրոն Քոթայամ (1963 թ.), Եթովպական Եկեղեցու կենտրոն Ադիս Աբեբա, Անգլիկան Եկեղեցու կենտրոն Լամբեթ պալատ (1956, 1963, 1975 և 1983 թթ.), ԵՀԽ-ի կենտրոն Ժնև (1963 և 1978 թթ.) այնուհետև նրա հանդիպումները Կիևի, Լենինգրադի, Մինսկի, Վենետիկի, Փարիզի, Մարսելի, Լիոնի, Պորտուգալիայի, Վիեննայի, Բավարիայի միտրոպոլիտների, կարդինալների, արքեպիսկոպոսների և քույր Եկեղեցիների այլ բարձրաստիճան հոգևորականների հետ:

Պատմա-եկեղեցական բացառիկ նշանակություն ունեցավ 1970 թվականի մայիսին Հայոց Հայրապետի չորսօրյա այցելությունը Վատիկան՝ Պողոս Զ Հռոմի սրբազան Պապին, որպես նրա պաշտոնական հյուրը: Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Հայ Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների գահակալներից և բարձրաստիճան հայ հոգևորականներից բաղկացած մի մեծ շքախումբ:

Մայիսի 10-ին, կիրակի օրը, Հռոմի Սուրբ Պետրոս տաճարում հանգուցյալ Պողոս Զ սրբազան Պապը, ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ասում էր. «Մենք այսօր պատիվը և ուրախությունն ունենք մեր մեջ ունենալու բացառիկ մի հյուրի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին, որը եկել է Սուրբ Էջմիածնից՝ Հռոմի Եկեղեցուն բերելու ողջույնը Հայաստանյաց փառավոր Եկեղեցու, որն այնքան հարուստ է սրբերով և մարտիրոսներով»:

Հայոց Հայրապետը, որպես Եկեղեցիների համագործակցության և ի Քրիստոս ապագա միության իդեալի ջատագով, բազմիցս հանդես է եկել ճա-

ռներով, քարոզներով, կոնդակներով՝ վեր հանելով էկումենիկ շարժման և Եկեղեցիների միության կարևորությունը արդի ժամանակներում: Ահա թե ինչպես է բանաձևել նա միության շարժման մասին իր ըմբռնումը 1965 թվականի հունիսին Եկեղեցիների միության հարցի վերաբերյալ հրապարակած իր կոնդակում. «Մեր օրերուն, Եկեղեցիներու միության գաղափարը և առաջադրանքը պետք է բանաձևել իբրև միություն մը Քրիստոսի սիրույն մեջ, եղբայրական հարաբերությանց մշակումով ու սերտ գործակցությամբ, ամեն Եկեղեցի պահելով իր դավանաբանական մտածելակերպը, իր ավանդությունները և իր ինքնագլուխ անկախ ղեկավարությունը»:

1969 թվականին Ս. Էջմիածնի և քույր Եկեղեցիների միջև հարաբերությունները սերտացնելու համար Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ Մայր Աթոռում ստեղծվեց միջեկեղեցական հարաբերությունների հատուկ բաժին:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին գլխավորում է Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը: Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետությունը, Հայ Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռները և ազգային-եկեղեցական թեմերը կազմում են օրգանական նվիրապետական անքակտելի մի միություն: Այդ միությամբ էլ բնորոշվում է Հայ Եկեղեցու ազգային-եկեղեցական միությունը:

Տխուր և ճակատագրական է եղել բախտը այն թեմերի, որոնք պատմության ընթացքում խզել կամ թուլացրել են իրենց կանոնական կապը Հայ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Ահա թե ինչու Հայ Եկեղեցու թեմերի կազմակերպումը և կանոնական կապը Ս. Էջմիածնի հետ Վազգեն Ա Կաթողիկոսի ուշադրության կենտրոնում է եղել հենց սկզբից:

Մենք մեր պատմական դժխեմ ճակատագրի բերումով ցրված ենք աշխարհով մեկ, բայց միացած ենք Ս. Էջմիածնի խորհրդով և սուրբ ծայնությամբ: Ս. Լուսավորչի Աջի զորությունն է, որ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռի հետ միացնում է բոլոր հայերին, մեր նվիրապետական Աթոռներն ու եկեղեցական բոլոր թեմերը՝ կազմելով այսպես հոգևոր մի ազգ՝ մի և միակրոն: Այսպես է եղել գրեթե միշտ մեր պատմության ողջ ընթացքում:

Մինչև 1956 թվականը Մայր Աթոռի և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի փոխհարաբերությունները գտնվում էին եղբայրական սիրալիր հողի վրա: Ամեն տեղ հաստատվել էր կանոնական գետնի վրա եկեղեցական միասնություն և ազգային միաբանություն: Այս սիրո հարաբերություններն ու ներդաշնակ գործակցությունը, սակայն, խանգարվեցին 1956-ից հետո, որովհետև Անթիլիասի Տանն Կիլիկյան Աթոռը ոչ օրինական կերպով իշխանությունը սկսեց տարածել պատմականորեն Էջմիածնի Մայր Աթոռի իրավասության ներքև գտնվող Պարսկաստանի, Հունաստանի և Միացյալ Նահանգների հայ եկեղեցական համայնքների վրա՝ ստեղծելով բաժանումներ արտասահմանի հայ հավատացյալ ժողովրդի ծոցում: Հուսով ենք, որ այս անբաղձալի կացությունը կվերացվի վերականգնումովը մինչ 1956 թվի օրինական դրության:

Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին օրերից նրան հետաքրքրող կարևոր հարցերից մեկն է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կապը Հայ Եկեղեցու նվիրապետական տեղական Աթոռների և հայրենիքի ու սփյուռքի տիրախնամ բոլոր թեմերի հետ:

Հայ ժողովուրդը ուր էլ որ գտնվել է, աշխարհի որ ծայրում էլ նրան նետել է տխուր ճակատագիրը, նա Սուրբ Էջմիածնի հարազատ զավակն է մնացել: Հայ Եկեղեցու և ժողովրդի պատմությունը ճշմարտապատում վկայություն

է այն բանի, որ, վաղ թե ուշ, Ս. Էջմիածնից հնչեցուածներին սպասում է ազգային դիմադրման անփառունակ վախճանը: Մայր Աթոռի և մեր եկեղեցական թեմերի միասնության իմաստուն քաղաքականության անշեղ կենսագործումով միայն կարելի է պահպանել Հայ Եկեղեցու կենսունակությունը և ապահովել նրա դարավոր գոյությունը:

Ահա այս առողջ և լուսավոր մտածումներով առաջնորդված՝ Հայոց Հայրապետը իր գահակալության առաջին տարիներից սկսեց իր հովվապետական այցելությունների շարքը դեպի Հայաստանյայց Եկեղեցու մոտիկ ու հեռավոր թեմերը: Նա եղավ ամեն տեղ իր սրտով, իր մտքով, իր խորհուրդներով: Նա սեյուռքի իր հայրենակարոտ և հավատացյալ ժողովրդի ծոցում հայտնվեց որպես մեր օրերի մի նոր Մովսես և իր հավատքի ջերմությամբ, լավատեսությամբ, հայրենաշունչ պատգամներով, Սուրբ Էջմիածնի օրհնությամբ և խորհրդով ջերմացրեց, բոցավառեց ու լուսավորեց իր սառագիր կավակների հոգիները: Սփյուռքի հայությունը Հայոց Հայրապետի օրհնաբեր այցելություններով հասկացավ, որ ինքն այլևս անտերունչ, թափառական ու լքված մի խլյակ չէ օտարության մութ ու ամայի ճամփաների վրա՝ ենթակա ճակատագրի տխուր հարվածներին, այլ նա ունի հայրենիք, պետականություն, որի խաղաղ ու ապահով հովանու ներքո մի նոր վերապարթոնք է ապրում մեր ժողովուրդը և նրա հավատքի կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Այսպիսով, Հայոց Հայրապետի հովվապետական բաղում այցելությունները տարբեր տարիներին դեպի սփյուռքի կանապան գաղթօջախները, ինչպես նաև հայրենական ու ներքին թեմերը ունեցան մեր ժողովրդի տարանջատ բեկորները ի մի ձուլող, նրանց հոգիները մայր հայրենիքի և Ս. Էջմիածնի շուրջ կենտրոնաձգող բարերար մեծ ազդեցություն:

1956—1983 թվականների ընթացքում Վազգեն Ա Կաթողիկոսը ավելի քան 25 հովվապետական ուղևորություններ է կատարել մեր ներքին և արտասահմանյան թեմերը: Այդ ուղևորությունների ժամանակ նա եղել է մեր նվիրապետական մյուս երեք Աթոռներում՝ Անթիլիասում, Երուսաղեմում և Կ. Պոլսում, եղել է թեմական մեր գրեթե բոլոր կենտրոններում՝ Հնդկաստանից մինչև Եվրոպա, Մերձավոր Արևելքից մինչև Ատլանտյանի ու Խաղաղականի ափերը՝ բաշխելու Ավետարանի լույսը և Ս. Էջմիածնի օրհնությունը:

Իր արտասահմանյան ուղևորությունների ժամանակ Հայոց Հայրապետը սլարտականություն է համարել միշտ այցելել տվյալ երկրի պետական ղեկավարներին՝ հայտնելու համար Մայր Աթոռի երախտագիտությունը այդ երկրների կառավարություններին և ժողովրդին՝ հայ ժողովրդի տարաստիյուռ կավակների հանդեպ ցույց տրված ասպնջականության և հովանավորության համար:

Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք Վազգեն Ա կաթողիկոսի ունեցած պաշտոնական հանդիպումները տարբեր երկրների պետական և քաղաքային իշխանությանց ղեկավարների և բարձրաստիճան անձանց հետ:

1. 1956 թվականի փետրվարին՝ Լիբանանի Հանրապետության նախագահ Քամիլ Շամունի հետ:
2. 1956 թվականի փետրվարին՝ Եգիպտոսի հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերի հետ:
3. 1956 թվականի ապրիլին՝ Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի մինիստր Քրիստիան Պինոյի հետ:
4. 1956 թվականի մայիսին՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ռընե Կոտիի հետ;

5. 1956 թվականի մայիսին՝ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ մարշալ Ն. Ա. Բուլգանինի հետ:
6. 1958 թվականի հունիսին՝ Նեպալի թագավոր Նորին Մեծություն Մահենդրա Բիր Բիքրան Շահ Դեանի հետ:
7. 1960 թվականի օգոստոսին՝ Արգենտինայի Հանրապետության նախագահ Ֆրոնտիսիի հետ:
8. 1960 թվականի օգոստոսին՝ Բրազիլիայի Հանրապետության պրեզիդենտ դոկտ. Գուբիշեկի հետ:
9. 1960 թվականի օգոստոսին՝ Ուրուգվայի Հանրապետության նախագահ Նորին Վսեմություն Նարդոնեի հետ:
10. 1960 թվականի սեպտեմբերին՝ Պորտուգալիայի Հանրապետության նախագահ Ամերիկո Թոմայի և վարչապետ Անտոնիո Օ. Սալազարի հետ:
11. 1960 թվականի սեպտեմբերին՝ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Կյուվ դը Մյուրվիլի հետ:
12. 1960 թվականի հոկտեմբերին՝ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա. Ն. Կոսիգինի հետ:
13. 1961 թվականի հուլիսին՝ Թուրքիայի Հանրապետության նախագահ զորավար Ջեմալ Գյուրսելի հետ:
14. 1963 թվականի հոկտեմբերին և
1975 թվականի հուլիսին՝ Հորդանանի Հուսեին Ա թագավորի հետ:
15. 1963 թվականի նոյեմբերին՝ Հնդկաստանի Հանրապետության նախագահ դոկտ. Ռադհակրիշնայի և վարչապետ Ջավահառլալ Ներուի հետ:
16. 1965 թվականի հունվարին՝ Եթովպիայի Հայլե Սելասիե Ա կայսեր հետ:
17. 1966 թվականի հուլիսին՝ Ավստրիայի Հանրապետության նախագահ Ֆրանց Յոնասի հետ:
18. 1967 թվականի հուլիսին՝ Ժնևի կանտոնի Պետական խորհրդի նախագահ Անդրե Շավանի հետ:
19. 1968 թվականի ապրիլին՝ Նյու Յորքի քաղաքապետ Ջոն Ֆ. Լինտսիի հետ:
20. 1968 թվականի մայիսին՝ Մոնտեբելլոյի քաղաքապետ Դեյվիդ Զիմմերի հետ:
21. 1968 թվականի հունիսին՝ Քվեբեկի վարչապետ Դանիել Ջոնսոնի և Կանադայի կառավարիչ զորավար Ռոնալդ Միչների հետ:
22. 1968 թվականի հունիսին՝ Արգենտինայի Հանրապետության նախագահ գեներալ Կառլոս Օնգանիայի հետ:
23. 1968 թվականի հուլիսին՝ Ուրուգվայի պառլամենտի նախագահ և Հանրապետության փոխնախագահ Ալբերտոյի հետ:
24. 1968 թվականի հուլիսին՝ Սան Պաուլոյի կառավարիչ-նահանգապետ Ռոբերտո Սոդրենի հետ:
25. 1968 թվականի հուլիսին՝ Բրազիլիայի Հանրապետության նախագահ մարշալ Կոստան Սիլվայի հետ:
26. 1970 թվականի մայիսին՝ Լիոնի նահանգապետ Մաքս Մուլենի հետ:
27. 1970 թվականի մայիսին՝ Մարսելի քաղաքագլուխ Գաստոն Դեֆերի հետ:
28. 1970 թվականի հունիսին՝ Պորտուգալիայի Հանրապետության նախագահ Ամերիկո Թոմասի և վարչապետ Մարչելլո Կայետանոյի հետ:

29. 1970 թվականի հունիսին՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի հետ:
30. 1975 թվականի մայիսին՝ Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության նախագահի տեղակալ վորավար Միխալովի հետ:
31. 1975 թվականի հունիսին՝ Հորդանանի գահաժառանգ Հասան իշխանի հետ:
32. 1978 թվականի հունվարին՝ Իրաքի կառավարության արդարադատության մինիստր Էլ Շավիի հետ:
33 1979 թվականի մայիսին՝ Մարսելի նահանգապետ Լյուսիեն Վոշելի հետ:
34. 1979 թվականի մայիսին՝ Լիոնի նահանգապետ Օլիվիե Ֆիլիպի հետ:
35. 1979 թվականի հունիսին՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի հետ:
36. 1979 թվականի հունիսին՝ Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի հետ:
37. 1981 թ. ապրիլին՝ Ավստրիայի հանրապետության նախագահ Ռուդոլֆ Քիրխշլեգերի հետ.
38. 1981 թվականի ապրիլին՝ Ավստրիայի արտաքին գործերի մինիստր Վիլլեբալդ Փահրի հետ:
39. 1981 թվականի մայիսին՝ Գերմանիայի Բավարիա նահանգի փոխվարչապետ դոկտ. Հիլլեր Մայերի հետ:
40. 1981 թվականի մայիսին՝ Ֆրանկֆուրտի փոխվարչապետ Գերհարդի հետ:
41. 1983 թվականի մայիսին՝ Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր Գաստոն Դեֆերի հետ:

Հայոց Հայրապետի արտասահմանյան ուղևորության օրերը սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքի տարեգրության մեջ կմնան հավետ հիշատակելի և պատմական իրադարձություններ:

Այստեղ առանձին գոհունակությամբ ուզում եմ արձանագրել, որ գահակալության իր 28 տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետը մշտապես վայելել է հույժ բարյացակամ և հարգալից վերաբերմունքը Հայաստանի բարեխնամ կառավարության: Նորին Սրբությունը եկեղեցական զանազան հարցերի կապակցությամբ բազմիցս հանդիպումներ է ունեցել Հայաստանի Գերագույն սովետի նախագահության նախագահների և Հակ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահների հետ:

Այս հանդիսավոր պահին պարտականությունն ունենք մեր խորին երախտագիտությունն ու շնորհակալ զգացումներն արտահայտելու մեր հայրենի բարեխնամ կառավարությանը, ինչպես նաև Սովետական Միության կառավարությանը և կրոնական գործերի խորհրդին՝ Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի գործունեության նկատմամբ նրանց ցուցաբերած բարյացակամ, ուշադիր վերաբերմունքի և բարոյական օժանդակության համար:

Սիրելի հոբելյար Հայրապետ, խորագույնս գնահատելով Ձեր երկարամյա անխոնջ վաստակը ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և որպես ուղեցույց ունենալով Ձեր ուսանելի կյանքի պայծառ օրինակը, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և հանուն Մայր Աթոռի իմ միաբանակից եղբայրների, դրդիական երախտագետ սրտով շնորհավորում եմ Ձեզ Ձեր եռյակ հոբելյանների առթիվ՝ մաղթելով Ձերդ Սրբությանը քաջառողջ և արևշատ տարիներ, արդյունաշատ երջանիկ հովվապետություն Լուսավորչի Գահի վրա ի պսակումն հայրենաշեն և եկեղեցանվեր Ձեր բոլոր մտադրությունների:

Ես ցանկանում եմ իմ քոսքն ավարտել հայրապետական մաղթերգի ծանոթ բառերով.

«Ամեն հայի սրտից բխած,
Լսիր այս ձայն, ո՜վ Աստված,
Երկար կյանք տուր հայրապետին,
Երկար օրեր՝ Հայոց Հոր:
Տե՜ր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Այս հանդիսավոր առիթով բեմ կբարձրանանք՝ բեռնավորված քաղցր կրկնակ պարտականություններով: Նախ, որպես Պատրիարք հայոց Թուրքիոյ. Մեզ հետ կբերենք որդիական սերը, հավատարմության զգացումները և խորագույն հարգանքն իմ ժողովուրդիս՝ Թուրքիոյ հասմայն հայությանն: Թե՛ անոնց, որոնք կբնակին արևմտահայության երբեմնի կրոնական ու մշակութային կեդրոն Կ. Պոլսոյ մեջ, և թե՛ անոնց, որոնք ցրված կապրին Փոքր Ասիոյ ամբողջ տարածքին վրա, իբրև մեր ժողովուրդի մնացորդացը:

Կարոտով կհիշենք, Վեհափառ Տեր, Ձեր պատմական այցելությունը Թուրքիա, 1961 թվականի հուլիսին, թե՛ գլխավորելու համար Մեր նախորդին՝ Խաչատուրյան երանաշնորհ պատրիարքի հուղարկավորությունը, և թե՛ մխիթարելու և սրտապնդելու Ձեր վշտահար թրքահայ զավակները, իբրև Հայր հոգևոր:

Այս հանդիսավոր առիթով Մենք կբերենք մեր ժողովուրդի սրտագին շնորհավորությունները Վեհիդ, եռյակ տարեդարձներու առիթով, ու կմաղթենք, որ Տերը ևս առավել երկար ընե Վեհիդ կյանքին տարիները՝ շարունակելու իր ծառայությունը Աստուծո և ազգին նույն և առավել արդյունավորությամբ:

Մեր ուսերուն վրա դրված է նաև քաղցր պարտականությունը թարգման հանդիսանալու մեր ամբողջ հոգևորական դասու մտածումներուն ու զգացումներուն:

Նշելի պարագա մըն է, որ Հայաստանյայց Եկեղեցվո ներկա եպիսկոպոսական դասը, չորսի բացառությամբ, ամենքն ալ Վեհիդ ձեռնասուններն են: Լման 43 հոգիներու վրա ձեռք դրած է Ձեր Սուրբ Օծությունը՝ կարգելով զանոնք իշխանավորներ Հայաստանյայց Եկեղեցվո: Եթե անոնցմե մեկ երրորդը արդեն իսկ վախճանած կամ այլապես անջատված է կրոնական կյանքե, մնացյալ երկու երրորդը, այսինքն՝ 28 վինվորյալներ պաշտոնի և պարտականության գլուխ են այսօր, իբրև Ձեր Վեհափառության շուքին և հեղինակության երկարաձգումը աշխարհի ամեն կողմերը: Ասոնք իրենց կարգին ձեռնադրած են բազմաթիվ կուսակրոն կամ ամուսնացյալ քահանաներ: Այնպես որ այսօրվան մեր հոգևորականները, ջախջախիչ մեծամասնությամբ, Ձեր անմիջական հոգևոր զավակները և թոռները կնկատվին: Ասոնք և մնացյալները, Վեհափառ Տեր, Ձեր կողքին կանգնած են իբրև միաձույլ վեմ, լեցված անսահման սիրով, խոր հարգանքով և հավատարմական անշեղ տրամադրությամբ: Ուրեմն Մենք թարգման հանդիսանալով անոնց սիրո և հավատարմական անշեղ զգացումներուն, կբերենք նաև ասոնց սրտագին մաղթանքները և որդիական շնորհավորությունները Վեհիդ եռյակ ու երջանիկ տարեդարձներու առիթով իբրև արգադիր նվեր:

Թեթևացած մեր այս քաղցր բեռներեն, թույլ տվեք, Վեհափառ Տեր, մատնանշելու կարգ մը իրողություններ, թե իսկ ըլլան շատ ծանոթ, շեշտելու համար այն բացառիկ դերը, զոր ունեցած է Ձեր Սուրբ Օծությունը ինչ-ինչ բնագավառներու մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո 130 հայրապետներու շարքին;



Կ. Պոլսի Ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարք

Առաջին հերթին, Մենք այնպես կկարծենք, թե Մայր Աթոռը, իր կառուցման լման 1680 տարիներու ընթացքին, ոչ մեկ ատեն այնքան ծաղկյալ, այնքան բարգավաճված եղած է, որքան Ձեր Վեհափառության աթոռակալության ընթացքին: Աշխարհ լինելով այն, ինչ որ է, այսօր արտաքին բարեկարգությունը կդառնա այնքան անհրաժեշտ, որքան ներքինը: Անձերը և հաստատությունները առհասարակ կդատվին և կարժևորվին տեսանելի չափանիշներով: Այս անկյունեն դիտված՝ Մայր Աթոռի նյութական բարեկարգ վիճակը կստանա բացառիկ կարևորություն: Մենք այսօր հպարտ ենք մեր վերանորոգյալ Մայր տաճարով, հոյակապ Վեհարանով և Մայր Աթոռի ծաղկյալ շրջապատով: Ու մեր հպարտության կուգընթաց կքալե, կխորհինք, Մայր Աթոռ բոլոր այցելողներու, կրոնական ու քաղաքական բարձրագույն դիրքերու վրա գտնվողներեն մինչև համեստ ու պատահական ուխտավորներու, թուրիստներու հարգանքը և հիացումը: Այս բոլոր բարեկարգությունները, Վեհափառ Տեր, մենք պարտական ենք Ձեր նախաձեռնության՝ հայրենի կառավարության ձեռնտվությամբ և արտասահմանի Ձեր կավակներու նյութական օժանդակությամբ: Չափազանցություն չէ հաստատել, որ մեր բոլոր հայրապետներու շարքին ամենեն շատ վերանորոգչական աշխատանք Ձեր օրով կատարված է թե՛ Մայր Աթոռեն ներս և թե՛ անկե դուրս մեր բազմաթիվ պատմական եկեղեցիներու վրա:

Երկրորդ մասը, ուր չափանիշ կուտրուած է Ձերդ Վեհափառությունը, իր արտասահմանյան ճամփորդություններն են: Շուրջ 25 անգամներ անհրաժեշտ դատած եք դուրս գալ Էջմիածնի սեղմ շրջանակեն, Ձեր աշխարհով մեկ ցրված հոտին այցելության: Այցելած եք հինգ աշխարհամասերու ավելի քան 15 երկիրները: Պատմության մեջ ոչ մեկ կաթողիկոս այնքան շատ երկիր շրջած է, որքան Ձերդ Վեհափառությունը: Այս ճամփորդություններով ամրապնդած եք կապը Սիսյանքի հայության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջև: Տարած եք շնորհը և օրհնությունը Միածնաէջ այս սրբավայրեն և ընդունած եք արտասահմանի հայության առավել հարումը և հավատարմությունը Մայր Աթոռին: Այս կերպով հոգևոր արյունը առավել աշխուժությամբ շրջան ըրած է Հայաստանյայց Եկեղեցվո կավակներու երակներուն մեջ՝ համապատասխան կենսունակություն ստեղծելով գրեթե ամենքի սիրտերուն և հոգիներուն մեջ: Վեհափառությանդ լավատեսությունը և հոգեշունչ պատգամները վարակած են Ձեր տարագիր կավակները համապատասխան հոգեվիճակով: Տարած ու բաշխած եք «փառքի լույս»-ը, որ իջավ Միածնին հետ այս հողերուն վրա, օտարության մեջ նստող մեր պանդուխտ ժողովուրդին:

Այս այցելությանց կուգընթաց, հանդիպած եք շատ ավելի մեծ թիվով կրոնական պետերու ու քաղաքական ղեկավարներու աշխարհի ամեն կողմերը, քան ինչ որ չէ ըրած որևէ հայոց հայրապետ: Ու այս հանդիպումները առիթ եղած են, որ օտար կրոնապետեր ու քաղաքական անձնավորություններ ավելի մոտեն ճանչնան հայ ժողովուրդը և Հայաստանյայց Եկեղեցին:

Երրորդ բացառիկ երևույթը եղած է այն, որ Ձերդ Վեհափառության օրով Մայր Աթոռը և Հայաստանյայց Եկեղեցին առավելագույն չափով շփում ունեցած են քրիստոնեական այլ Եկեղեցիներու հետ: Հայ Եկեղեցին դադրած է ինքն իր մեջ մեկուսացյալ անծանոթ Եկեղեցի մը ըլլալե և բարձրացած է միջազգային և համաքրիստոնեական մակարդակի, իբրև մեկը քրիստոնեական հնագույն Եկեղեցիներեն, որ շատ մը մարդերու մեջ լավագույնս պահած է առաքելական ավանդը, ըլլալով միաժամանակ լայնամիտ ու լուսամիտ Եկեղեցի մը: Ձեր հայրապետության ընթացքին է, որ Հայ Եկեղեցին անդամակցեցավ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, Ամերիկայի Եկեղեցիներու

Համաժողովին, Եվրոպական Եկեղեցիներու Կոնֆերանսին, Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսին, Համաօրթոդոքս Եկեղեցիներու Ժողովին, «Հավատո և Կարգի» ժողովին, ու վերջապես տեսականորեն մեկի դավանակից Արևելյան Ուղղափառ հինգ Եկեղեցիներու պետերու համագումարին:

Ձեր Վեհափառության գահակալության ընթացքին բացառիկ երևույթներեն մեկն ալ եղավ նաև այն, որ գրեթե բոլոր քրիստոնյա քույր Եկեղեցիներու պետերու հետ հանդիպում և հաղորդակցություն ստեղծեցիք, էկումենիկ գիծով և ոգիով: Այս հանդիպումները սերտացուցին և ամրապնդեցին քրիստոնեական կապերը մեր և մյուս Եկեղեցիներու միջև: Ասոնց կարգին հիշատակության արժանի են, օրինակ, Ձեր հանդիպումները Հռոմի Պապին, Կ. Պոլսո Տիեզերական Պատրիարքին և գրեթե բոլոր օրթոդոքս պատրիարքներուն, ինչպես նաև մեկի դավանակից հինգ Եկեղեցիներու հոգևոր պետերուն, Անգլիկան և այլ արևմտյան քրիստոնյաներու գլխավորներու հետ: Այս առիթներով ջատագով հանդիսացած եք Եկեղեցիներու համագործակցության և իրարու մերձեցման իդեալին, յուրաքանչյուր Եկեղեցի պահելով իր ավանդությունները և եկեղեցական յուրահատուկ դիրքը և վարչական դրությունը:

Վերջին և թերևս կարևորագույն բացառիկ իրականությունն այն եղավ, որ Ավետարանի խոսքը առավելագույն տարածում գտավ համայն հայության մեջ Ձեր միջոցավ: Ու այս՝ Ձեր հոգեշունչ քարոզներով և սրտառատ կոնդակներով, նույնքան ավելի Ձեր նախաձեռնությամբ կատարված Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանությամբ և հրատարակությամբ, արևելահայերեն և արևմտահայերեն լեզուներով: Արևելահայերեն թարգմանությունը արդեն իսկ ունեցած է երեք տպագրություններ՝ 60.000 օրինակներով, որոնք համարյա ամբողջությամբ սպառած են:

Այսօր իրողություն է նաև, որ արդեն իսկ թարգմանվելու վրա է Հին Կտակարանը ամբողջությամբ, հայրենի երիտասարդ գիտնականներու կողմե, միշտ Մայր Աթոռ պատվերով և Հայոց Հայրապետի հովանավորությամբ:

Ուրեմն Աստուծո և ազգին ընծայված թանկագին կյանքի մը ծննդյան 75-ամյակը և կրոնական գործունեության 40-ամյակը և որպես Հայրապետ Ամենայն Հայոց՝ գահակալության 28-ամյակն է, որ կնշենք այս պահուս: Ընկերային կյանքին մեջ ամենեն գեղեցիկ, ամենեն ներշնչող երևույթներեն մեկն է տեսնել անձ մը, որ իր ամբողջ կյանքը կընծայե Աստուծո և ընկերության ծառայության: Ահավասիկ այդպիսի կյանքերեն մեկը եղավ Վեհափառինը: Իր կյանքը ընծայեց Աստուծո և ազգին, ու Աստված և մեր ժողովուրդը բարձրացուցին զինքն այն նվիրական դիրքին, ուր կգտնվի ան այնքան արժանավորապես:

Թող շատ ըլլան տարիները Վեհափառ Հայրապետին, որպեսզի շարունակե ան իր օգտաշատ աշխատանքները վասն խաղաղության աշխարհի, վասն պայծառության Հայաստանյայց Եկեղեցվո:

Փառք այն ժողովուրդին, որ ծնավ զայն. պատիվ այն անձին, որ արժեվորեց իրեն տրված տաղանդները և դիրքը ու արդարացուց այն վստահությունը, որ մեր ժողովուրդը իր վրա դրավ՝ միաձայնությամբ ընտրելով զայն Կաթողիկոս Ամենայն Հայոց: Գոհություն Ամենակալին, որ պարգևեց մեզի Վազգեն Ա-ի պես արժանավոր և շնորհալի Հայրապետ մը, որ իր ամբողջ կյանքն ընծայաբերեց Աստուծո փառքին, մեր ժողովուրդի ու Հայաստանյայց Եկեղեցիի պայծառության համար:

Իր շուքը և Աստուծո շնորհքը անպակաս ըլլան Մայր Աթոռին և Հայաստանյայց Եկեղեցիի ու ժողովուրդի վրայեն:

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՌՈՒԲԵՆ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարության հանձնարարությամբ ջերմորեն շնորհավորել Ձեզ Ձեր բեղմնավոր, իմաստուն կյանքի 75-ամյակի և հանրապետության բարձրագույն պարգևով՝ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով պարգևատրվելու առթիվ:

Տարիքը մարդու մի նվիրական գանձատուն է, որի հարստության չափանիշը, ժամանակի ու շրջապատի հանդեպ ունեցած պարտքի պատասխանատվությամբ, նրա կատարած աշխատանքի նշանակալիությունն է:

Այսօր, Ձեր կյանքի 75 տարիների հանրագումարի օրը, հանգիստ է Ձեր խիղճը, իսկ միտքն ու էությունը առլեցուն են նոր մտահղացումներով ու իրագործումներով:

Դեռևս մանկության տարիներին, հայրենիքից հեռու, օտար ափերում, Դուք զգացիք հարավատ ժողովրդի ճակատագրի ողջ դաժանությունը: Ուսանողական տարիներից որդեգրվեցիք հայ ժողովրդի գոյատևման ու լավագույն երազանքների իրականացման ակնիվ գործին, հոգեբան մանկավարժի ջանասիրությամբ նվիրաբերեցիք Ձեզ հայ մանուկների կրթությանն ու դաստիարակությանը, եղաք հայ Սփյուռքի ուշագրավ ամսագրերից մեկի՝ «Հերկ»-ի հիմնադիրն ու խմբագիրը: Հեղինակ դարձաք հայագիտական ու մանկավարժական արժեքավոր աշխատությունների, ու երբ 40 տարի առաջ Ռումինիայում հայ գաղթօջախը կանգնեց առավել դժվար կացության առաջ, մի կողմ թողնելով Ձեր անձնական ծրագրերն ու նախասիրությունները, վերցրիք Ձեր վրա հոգևոր հովվի ծանր ու դժվարին պարտականությունը:

Ձեր հայրենասիրական անձնուրաց նվիրումը, իդեալների հստակությունը ու նրանց ծառայելու հաստատակամությունը 28 տարի առաջ, սեպտեմբերյան այս օրերին, Ձեզ գահակալը դարձրին Լուսավորչի պատմական Աթոռի:

Հայ ժողովրդի բազմադարյան երազանքի ռեալ իրականացումը՝ վերածնված հայրենիքը, Սովետական Հայաստանը, իր աննախընթաց վերելքով ու առավել պայծառ ապագայով, նոր եռանդ ու իմաստ տվեցին Ձեր հայրենասիրական, ազգանվեր գործունեությանը, ամրացրին հավատը պանդխտությունից ու որբությունից ապատագրված հայ ժողովրդի ապագայի ու հարատևության հանդեպ:

Ձեր գահակալության տարիներին, իմաստուն ու հոգատար ղեկավարությամբ, Դուք, ինչպես երբեք, բարգավաճ ու ծաղկուն դարձրիք Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռը՝ Ս. Էջմիածինը:

Միշտ առաջնորդվելով սրբական պարգևի՝ կյանքի պահպանման մեծ խորհրդով, Ձեր հայրենասիրական գործունեությունն կարևոր խնդիրներից մեկը դարձրիք նպաստել աշխարհում խաղաղության պահպանմանը, ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Լինելով մեր ժամանակի ճանաչված ու հարգված հոգևոր առաջնորդներից մեկը, հնչեցրիք աշխարհով մեկ Ձեր ձայնը՝ հանուն խաղաղության, հանուն վինաթափման, ընդդեմ պատերազմի:

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք կրկին անգամ ի սրտե շնորհավորել Ձեզ, մաղթել քաջառող-

ցություն, արևշատություն, անսպառ եռանդ և ցանկալ նոր հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեությանը:

Տիար Ռուբեն Պարսամյանի ելույթից հետո խոսքը տրվում է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի անդամ Վիկտոր Վոլոդինին, որը ընթերցում է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վլադիմիր Կուրոյեդովի ողջույնի

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը ողջույնի խոսքը ընթերցելիս

գիրը Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի առթիվ (տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 10):

Այնուհետև ելույթ է ունենում Ռուսաց Եկեղեցու պատվիրակության ղեկավար միտրոպոլիտ Անտոնին:

«Ձերդ Սրբություն,

Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարքը խնդրեց ինձ հաղորդել Ձեզ իր եղբայրական սերը և խոր հարգանքը Ձեր ծննդյան 75-ամյակի, քահանայագործության 40-ամյակի և գահակալության 28-ամյակի առիթով:

Սրբազան Պատրիարքը հղում է Ձեզ իր շնորհավորական հետևյալ ողջույնի խոսքը.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, Ի ՔՐԻՍՏՈՍ ՍԻՐԵՑՅԱԼ ԵՂԲԱՅՐ, ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ձեր հոբելյանի փառավոր տոնակատարության ուրախալի այս օրը ի սրտե ուղարկում ենք Ձեզ անձամբ Մեր և ողջ Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Ձեր հանդեպ տածած խոր հարգանքի և սիրո զգացմունքները:

Սեպտեմբերը նշանակալից ամիս է Ձեր կյանքում: Այս տարի սեպտեմբերին նշվում է Ձեր ծննդյան 75-ամյակը, քահանայագործության 40-ամյակը և գահակալության 28-րդ տարեդարձը՝ սկսած այն օրերից, երբ Աստուծո կամքով և Ազգային Եկեղեցական ժողովի որոշմամբ Ձեզ ընտրեցին Ծայրագույն Պատրիարք Հայոց Եկեղեցու և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Դեռ երիտասարդ տարիներին Դուք վայելել եք Աստուծո բարեհաճությունը և մարդկանց անկեղծ սերը: Սկզբում մանկավարժ, հետո սուրբ կարգով՝ Բուլղարիայի և Ռումինիայի հայոց առաջնորդ, իսկ 1955 թվականին Դուք միաձայն ընտրությամբ արժանացաք Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր պատվին և դարձաք Ս. Գրիգոր Լուսավորչի սրբազան գահի 130-րդ Հայրապետը:

Քառորդ դարից ավելի է, ինչ շարունակվում է Ձեր օրհնյալ ծառայությունը հայաշխարհյան հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Այդ տարիները ներեկեղեցական, էկումենիկ և խաղաղասիրական գործունեության արդյունավետ տարիներ եղան: Ձեր իմաստուն ղեկավարության ներքո բարեկարգվեց Հայ Եկեղեցու հոգևոր կյանքը, վերականգնվեցին Հայաստանի հին տաճարները և վանքերը, պատշաճ շքեղություն ստացան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Վեհարանի շենքը, ընդլայնվեց կաթողիկոսարանի հրատարակչական գործունեությունը և ծաղկեց հոգևոր ճեմարանը, որտեղ Դուք շարունակում եք Ձեր մանկավարժական աշխատանքը:

Դուք ձեռնարկեցիք սիրո և խաղաղության մի շարք առաքելություններ դեպի աշխարհի տարբեր երկրներ, որտեղ ունեցաք եղբայրական հանդիպումներ քրիստոնեական Եկեղեցիների պետերի հետ, այցելեցիք Հայ Եկեղեցու թեմերը և հայկական գաղթօջախները, ելույթներ ունեցաք միջազգային էկումենիկ և խաղաղասիրական ժողովներում: Աշխարհի այս անհանգիստ ժամանակաշրջանում Մենք բարձր ենք գնահատում Ձեր գործուն մասնակցությունը խաղաղասիրական այն գործերին, որոնք ձեռնարկվել են Սովետական Միությունում Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների կողմից, մանավանդ

1977—1982 թվականների ընթացքում Մոսկվայում տեղի ունեցած կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանսներում:

Անժխտելի է Ձեր վաստակը Հայ Առաքելական և Ռուս Դրավոսլավ քույր Եկեղեցիների անկեղծ բարեկամական կապերի ամրապնդման գործում: Ոչ մի բան սովեր չի գցում մեր Եկեղեցիների ավնիվ եղբայրական հարաբերությունների վրա, և սրանում Մենք տեսնում ենք Աստուծո օրհնությունը քրիստոնեական համագործակցության մեջ:

Նովգորոդի և Լենինգրադի միտրոպոլիտ Անտոնի

Ի ճանաչում այն մեծ աշխատանքի, որ Դուք ներդրեցիք էկումենիկ, խաղաղասիրական ու հայրենասիրական ասպարեզներում, ինչպես նաև մեր երկու ժողովուրդների և Եկեղեցիների ավանդական եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում, այլև Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ Մենք Ձերդ Սրբությանը պարգևատրում ենք «Սուրբ Սերգեյ Ռադոնեժսկու» առաջին կարգի եկեղեցական շքանշանով: Այս պարգևի հանձնումը արտոնեցինք Ռուս Դրավոսլավ Եկեղեցու Ս. Սինոդի մշտական ներկայացուցիչ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ սրբազան Անտոնիին:

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, թող Մեր հարգանքի այս տեսանելի նշանը հիշեցնի Ձեզ Մեր եղբայրական անդավաճան սերը և խորին հարգանքը Ձեր նկատմամբ, որպես ազանչելի մարդու, որպես հայ աշխատասեր, տաղանդավոր, դժբախտությունների մեջ տոկուն և դարերի ընթացքում իր ինքնատիպ մշակույթը պահպանած ժողովրդի զավակի, որպես Աստուծո կամքին միշտ հնազանդ ճշմարիտ քրիստոնյայի և որպես իմաստուն հոգևոր հովվի, որը հայրական սիրով առաջնորդում է իր բազում և բազում հավատացյալներին փրկության ճանապարհով:

Աղոթում ենք՝ ցանկանալով Ձերդ Սրբությանը Աստուծո բարեշնորհ օգնականությունը Ձեր հայրապետական ծառայության բոլոր ճանապարհներում:

Եղբայրական անփոփոխ սիրով ի Քրիստոս՝

ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Մոսկվա,
23 սեպտեմբերի 1983 թ.

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Մեծարգո Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Ձեր ծննդյան 75-ամյակի և քահանայական ձեռնադրության 40-ամյակի առթիվ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն Ձեզ է հղում քաջառողջության, անսպառ եռանդի և կորովի իր բարեմաղթանքները և այն համոզմունքը հայտնում, որ դեռ երկար տարիներ Ձեզ հաւուկ անսպառ աշխատասիրությամբ ու տքնանքով պիտի շարունակեք Ձեր մարդասիրական, խաղաղասիրական առաքելությունը:

Տասնամյակներ շարունակ Դուք ակնառու, կարևոր դեր եք կատարել թե՛ Հայ Եկեղեցու ամրապնդման, թե՛ սփյուռք-հայրենիք կապերի սերտացման և թե՛ խաղաղության համար մղվող պայքարի գործում:

Ներսես Մեծից մինչև արժանահիշատակ Գևորգ Չորեքչյան, հայ ժողովուրդը բազմաթիվ կաթողիկոսներ, կրոնական գործիչներ է ունեցել, որոնք գնահատվել են ըստ արժանվույն և դարձել ժողովրդի անմոռաց դեմքեր: Դուք պատմական ներկա ժամանակներում նույնպես գնացիք հոգևոր այդ գործիչների ճանապարհով, պահպանելով լավագույն ավանդները, որ թողել էին նրանք:

Որպես խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ, Դուք ամենագործուն մասնակցությունն եք ունեցել խաղաղության պաշտպանության համամիութենական, միջազգային համաժողովներին, Մոսկվայի, Պրագայի, Ստոկհոլմի, Բեռլինի ամբիոններից Ձեր ձայնը բարձրացրել ի պաշտպանություն աշխարհի խաղաղության, ժողովուրդների անվտանգության, հանուն լիակատար կինաթափման և մարդկության հանգիստ ապագայի:

Կանխատեսելով պատերազմինությունների մրցավազքի անխուսափելի հետևանքը, դեռ 1961 թ., Պրագայի խաղաղության համաշխարհային կոնգրեսում ի լուր աշխարհի Դուք հայտարարեցիք, որ պատերազմը բոլոր տեսակի ռաֆիրների հանրագումարն է, առաջարկեցիք և պահանջեցիք, որ նման ռաֆիրները երբեք չկրկնվեն երկրագնդի վրա:

Այս խոսքերը կրկնակի կշիռ են ստանում բազում արհավիրքներ տեսած, ամեն կարգի վտանգներից անցած և խաղաղության շնորհիվ վերածնված հայ Ժողովրդի Եկեղեցու առաջնորդի՝ Ձեր շուրթերին:

Բարձր գնահատելով սովետական պետության իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ այսօր աշխարհի զարգացած երկրների շարքում քայլող մեր հանրապետության նվաճումները, մեր հայրենասեր և ժրաջան ժողովրդի աշխատանքի հիանալի արդյունքները, Դուք Ձեր ողջ ուժերը, անսպառ

եռանդը ի սպաս եք դնում համայն հայության միակ հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հեղինակության տարածմանը.

Որպես Ամենայն Հայոց կաթողիկոս և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հիմնադիր անդամ, անուրանալի է Ձեր կարևոր դերը սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման, աշխարհասփյուռ մեր հայրենակիցներին մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու սուրբ գործում: Սփյուռք կատարած Ձեր բազմաթիվ այցելությունները, հանդիպումները, ելույթները մեծապես նպաստում են Սփյուռքի և մայր հայրենիքի մերձեցմանը:

Ձեր ծառայությունները մշտապես բարձր են գնահատվել սովետական պետության կողմից: Խաղաղության պաշտպանության օգտին հայրենասիրական գործունեության համար Դուք արժանացել եք կառավարական բարձր պարգևների:

Այս ուրախ առիթով կրկին ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ և մաղթում բարեբաստություն, երկար տարիների կյանք՝ ի շահ Հայ Եկեղեցու, հանուն խաղաղության և ժողովուրդների բարեկամության:

Այնուհետև խոսքը տրվում է Ռումինական Եկեղեցու պատվիրակության ղեկավար, Մոլդովայի և Սուչավայի միտրոպոլիտ Թեոկթիստին: Սրբազան հայրը իր և պատգամավորության անունից շնորհավորում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակը, որից հետո ընթերցում Ռումինական Եկեղեցու պետ Տ. Ժուստին Պատրիարքի ողջույնի ուղերձը Հայոց Հայրապետի ծննդյան 75-ամյակի առթիվ:

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ Տ. ԺՈՒՍՏԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբություն,

Մենք ամբողջ հոգով կցանկանայինք լինել Ձերդ Սրբության հետ՝ Հայ Առաքելական Եկեղեցու այդ երկու նշանակալից տոների առիթով, բայց այս օրերին Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու պետ Մաքսիմ Պատրիարքի եղբայրական այցը Ռումինական Եկեղեցի պարտադրում է մեզ մնալ Բուխարեստում:

Այս պատճառով խնդրում ենք Ձեզ Մեր և Ռումինական եկեղեցու կողմից ընդունել, իբրև հյուր-պատվիրակների, Մոլդովայի և Սուչավայի միտրոպոլիտ Թեոկթիստիս, Ալբա Յուլիայի եպիսկոպոս Էմիլիանովին, ավագերեց Կոստանդին Պիրվուին, պատրիարքական թարգմանիչ Սավա Մարինային, որոնք պետք է մասնակցեն հանդիսություններին:

Խնդրում ենք Ձեզ մեր պատվիրակների միջոցով ընդունել սմենսբարի մեղթանքներ: Ձերդ Սրբությանը ցանկանում ենք քաջառողջություն, հոգևոր ուրախություն և անսպառ կորով Հայ Եկեղեցու և ժողովրդի ծառայության, մեր Եկեղեցիների մերձեցման, խաղաղության և ժողովուրդների համերաշխ գործակցության համար:

Նույն բարի մաղթանքները փոխանցում ենք Հայ Եկեղեցուն, մեռուոյինեքի արարողության առիթով, որի խորհուրդն է՝ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի հոգևոր միությունը:

Համոզված ենք, որ Մեր մաղթանքները կընդունվեն ամենաջերմ սիրո զգացմունքներով, որոնք միշտ բարեկամացնում են մեր Եկեղեցիները և ժողովուրդները:

Մոլդովայի և Սուչավայի միտրոպոլիտ Թեոկթիստ

Ողջունում ենք Ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսով՝ մաղթելով երկար և երջանիկ տարիներ:

ԺՈՒՍՏԻՆ

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ

Ապա խոսքը տրվում է Հայաստանի Խաղաղության ֆոնդի հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Էդուարդ Միրզոյանին, որը ընթերցում է Հայաստանի Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի և Խաղաղության ֆոնդի հանձնաժողովի հետևյալ ողջույնի ուղերձը:

«ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ,

Հաճույք ունենք Հայաստանի Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի և Խաղաղության ֆոնդի հանձնաժողովի անունից ողջունելու Ձեզ Ձեր ծննդյան փառավոր 75-ամյակի առթիվ:

Դուք, որպես Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահության անփոփոխ անդամ, Ձեր մեծ ներդրումն ունեք Հայաստանում խաղաղության կողմնակիցների շարժման, ինչպես նաև խաղաղության ֆոնդի կայմակերպման մեջ: Ժամանակակից փուլում, երբ Արևմուտքի հետադիմական ուժերի կողմից սանձազերծված սուռը պատերազմի հետևանքով ծայրաստիճան լարվել է միջազգային իրադրությունը, Ձեր ծավալած եռանդուն գործունեությունը հանուն խաղաղության բարձր են գնահատում խաղաղության կողմնակիցները:

Խաղաղության պաշտպանության գործում Ձեր հայրենանվեր դիրքորոշումը նաև ներգործուն ազդեցություն ունի աշխարհասփյուռ հայությանը խաղաղու-

թյան պաշտպանության համաշխարհային շարժման մեջ ընդգրկելու առաջարկում:

Հայաստանի Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեն և Խաղաղության ֆոնդի հանձնաժողովը Ձեր այնծայի հոբելյանի օրը հղում են Ձեզ իրենց ջերմ ողջույնը, ցանկանում քաջառողջություն ի փառս մայր հայրենիքի հետագա բարգավաճման, Սովետական Հայաստանի շուրջը սփյուռքահայության հետագա համախմբման, խաղաղության պաշտպանության և ամրապնդման:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՀՍՍՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ Է. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ Ա

Ձերդ Վեհափառություն,

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը և գիտական խորհուրդը ջերմորեն ողջունում և շնորհավորում են Ձեզ Ձեր ծննդյան 75-ամյա հոբելյանի առիթով:

Հայրենասիրեր Ձեր գործունեության ընթացքում Դուք մեծ եռանդով շարունակել եք մեր իմաստուն հայրապետների գեղեցիկ ավանդները, աշխատել եք հայ ժողովրդի հոգևոր ու բարոյական միասնության գաղափարի իրականացման ուղղությամբ:

Մեր հասարակայնությունը բարձր է գնահատում Ձեր հետևողական ջանքերը աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման վեհ գործում:

Դեռևս երիտասարդական տարիներից Ձեր գործունեության մեջ ընդգծվել է հոգատարությունը մեր մշակութային արժեքների փրկության, հավաքման և պահպանության նկատմամբ:

Այսօր մենք առանձնապես ցանկանում ենք նշել Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց գանձարանը հարստացնելու Ձեր մեծ աշխատանքը: Ձեր գործարար հորդորներով Սփյուռքից պարբերաբար հայրենիք են բերվում հայ մեծանուն պատմիչների, տաղերգուների, մանրանկարիչների գրչին պատկանող բազմաթիվ մեծարժեք գրչագրեր: Մեր հավաքածուներում հատուկ տեղ են գրավում նորահայտ անգնահատելի այն երկու մատյանները, որոնք Դուք նվիրել եք Մատենադարանին և որոնք գրանցվել են «Վեհամոր» և «Վեհափառի» Ավետարաններ անվան ներքո: Այդ հնագույն կոթողները, որոնք թվագրվում են 8—9-րդ դարերով, եկան լրացնելու մեր հնագույն հուշարձանների շարքը և իրենց պատվավոր տեղը գրավեցին «Էջմիածին» և «Լավարյան» Ավետարանների կողքին:

Բարձր գնահատանքի է արժանի նաև Ձեր հոգատարությունը և գործուն

75

Հեռացե՛ք Հայոց Կաթողիկոս

ՎԱՂԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Հիշատակագիր

Հանդիսավոր մեծ հանդեսներ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կոմիտեի և Խորհրդային Փոնդի հանձնաժողովի անունից ողջունեցին Ձեզ, Ձեր ծննդյան փառավոր 75 ամյակի առթիվ:

Դուք դարձաք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կոմիտեի նախագահության անդամ, Ձեր մեծ ներդրումն ունեք Հայաստանում Խորհրդային կոլեկտիվների շարժման ինչպես նաև Խորհրդային Փոնդի կազմակերպման մեջ: Ժամանակավոր փուլում, երբ Արևմուտքի հետադիմական ուժերի կողմից առաջադրված սուտ դրոշակների հետևանքով ծայրաստիճան դժվարացել է հիշողության իրականությունը, Ձեր ծանրակշիռ եռանդուն գործունեությունը հանում է խորհրդային քաղաքացի եք գնահատում Խորհրդային կազմակերպությունը:

Խորհրդային սոցիալիստական գործում Ձեր հայրենասիրական դիրքորոշումն էլ ներդրում ունի աշխարհասփյուռ հայությունը խորհրդային սոցիալիստական հանրակացարանի շարժման մեջ միավորելու ասպարեզում:

Հայաստանի Խորհրդային սոցիալիստական հանրապետության կոմիտեն և Խորհրդային Փոնդի հանձնաժողովը Ձեզ պատվավոր հրավեր են հղում Ձեզ լրացնել ողջույնը, ցանկանում քաջառողջություն ի փառս հայրենիքի հետագա բարգավաճման, Սովետական Հայաստանի շարունակ ավյուռքահայության հետագա հանգիստ, խորհրդային սոցիալիստական և ազգասիրական:

ԽՍՀՄ ԳԱՄՏՈՒԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՍՍՀ ԳԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԽՍՀՄ ՓՈՆԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՍՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ

Է. Մ. ՄԻՐԶՈՅԱՆ

օժանդակությունը ճարտարապետական հուշարձանների վերականգնման ասպարեզում:

Այս բոլորի համար և Ձեր շինարար ջանքերի համար խորին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ և ցանկանում երկար կյանք և քաջառողջություն՝ ի բարօրություն մեր ժողովրդի և նրա բազմադարյան մշակույթի:

Այնուհետև խոսքը տրվում է Վրաց Եկեղեցու ներկայացուցիչ Մարգվեթի եպիսկոպոս Տ. Քրիստափորին, որը հոբելյար Հայրապետին ողջունում է հետևյալ ուղերձով.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք Վրաց Օրթոդոքս Եկեղեցու անունից ի սրտե շնորհակալություն հայտնել Ձեզ Ձերդ Սրբության ծննդյան 75-ամյակի և մեռոնօրհնության հանդիսություններին մասնակցելու սիրալիր հրավերի համար:

Հանուն Հիսուս Քրիստոսի սիրո ընդունեցեք Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ի, Սուրբ Սինոդի և անձամբ իմ կողմից սրտագին շնորհավորանքներ Ձեր ծննդյան 75-ամյակի առիթով:

Հայ Առաքելական Եկեղեցին իր մեջ մարմնավորում է հայ ժողովրդի կենդանի ոգին: Մենք հավատում ենք այդ ոգու, ինչպես և բազմաչարչար հայ ժողովրդի անմահությանը: Դեռ քրիստոնեության արշալույսին, մեր թվագրության առաջին դարերին, հայ ժողովուրդը և իր Սուրբ Եկեղեցին ծնեց քրիստոնեական հավատքի այնպիսի ջատագով, ինչպիսին էր Պարույր Հայկազնը, որն այնքան փառաբանվեց Հռոմեական կայսրության մեջ իր ճարտարախոսությամբ և իմաստությամբ, որ Հռոմի գեղեցիկ հրապարակներից մեկում կանգնեցրին նրա արձանը:

Դեռ Ե դարից սկսած, քրիստոնեական հավատքը Հայաստանում հիմնավորվեց այնպիսի փիլիսոփա-աստվածաբանների կողմից, ինչպիսիք էին՝ Ագաթանգեղոսը և Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին և Եղիշեն, Մովսես Խորենացին և Դավիթ Անհաղթը, ապա և Անանիա Շիրակացին, որը հայ մագաղաթյա հուշարձաններում հայտնի է որպես «Մեծ Վարդապետ»:

Ժ դարում Հայաստանի հոգևոր հայր սուրբ Գրիգոր Նարեկացին իր աստվածաբանական աշխատություններից մեկում գրում էր. «Աստված գերագույն էակն է, այդ իսկ պատճառով նրա ճանաչումը սովորական ճանապարհով անհնարին է: Եթե այդ հնարավոր լիներ, այսինքն հնարավոր լիներ նրա ճանաչումը սովորական մեթոդներով, ապա նա կդադարեր գերագույն էակ լինելուց և կիջներ սովորական արարածների մակարդակին. իսկ դա անհնարին է: Այս բանի համար Աստված անճանաչելի է և մարդուն հայտնվում է միայն հավատքի միջոցով: Մարդու կյանքի գլխավոր նպատակն է նմանվել Աստծուն, որի շնորհիվ մարդու բնությունը միանում է Աստուծո բնությանը, իսկ դրան մարդ կարող է հասնել հավատքով, ոչ թե գիտությամբ՝ գիտակցելով ունայնության ունայնությունը և ազատվելով մարմնական կրքերից»:

Ձերդ Սրբություն, Գրիգոր Նարեկացու այս իմաստուն խոսքերը լիարժեք կերպով կարող ենք օգտագործել և Ձեզ համար: Դուք, դեռ երիտասարդ հասակում, եկաք Ս. Էջմիածին, հրաժարվեցիք անձնականից, երկրային հաճույքներից և ահա երրորդ տասնամյակն է, ինչ անձնուրաց կերպով ծառայում եք

Քրիստոսին՝ ի փառս հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու: Այս կապակցությամբ թույլ տվեք, Ձերդ Սրբություն, հիշել այն խոսքերը, որ Դուք արտասանել եք 1977 թվականի դեկտեմբերի 25-ին Իլիա Բ կաթողիկոսի գահակալության և օծման հանդիսության առթիվ: Դուք այն ժամանակ ասացիք հետևյալը. «Պետք է հաստատեմ Ձեզ, որ այս օրերին ես շատ հուզված եմ: Հիշողությանս մեջ նորից կենդանացան այն թանկ և հարազատ օրերը իմ կյանքի, երբ 1955 թվականին ինձ ընտրեցին կաթողիկոս: Այդ ժամանակ ես էլ երիտասարդ էի: Երբ ընտրում են Եկեղեցու պատրիարք, ողջ ժողովուրդը հրճվում է: Բայց այն օրերին ես վախենում էի: Ես վախենում էի այն դժվարին բեռից, որ դրվում էր իմ ուսերին: Չէ՞ որ այն ժամանակ մեր Եկեղեցին ավելի մեծ դժվարություններ ուներ, քան ներկայումս»:

Ձերդ Սրբություն, ավելացնելով ասենք, որ Դուք ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում նվաճեցիք փառք և հարգանք Հայ Եկեղեցու համար, պատվով կատարեցիք Ձեր սուրբ պարտքը հայրենիքի և ժողովրդի առաջ: Եվ այդ ուրախացնում է մեզ՝ Վրաց Օրթոդոքս Եկեղեցու Ձեր եղբայր պատգամավորներին: Դուք շատ ջանք եք թափում աշխարհի խաղաղության պահպանման համար, մեծ ներդրում ունեք այդ գործում. Խաղաղությունն անհրաժեշտ է արդի դարաշրջանի մարդկությանը: Մեզ բոլորիս քաջ հայտնի է նաև Ձեր գնահատելի վաստակը ժողովուրդների բարեկամության և էկումենիկ գործունեության ասպարեզում:

Ձերդ Սրբություն, թույլ տվեք ևս մեկ անգամ շնորհավորել Ձեզ Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ:

Ցանկանում ենք Ձեզ երկար տարիների կյանք և բեղմնավոր գործունեություն: Թող Աստված Ձեզ օգնական լինի Ձեր սուրբ առաքելության մեջ՝ ի բարօրություն հայ հավատացյալ ժողովրդի և ի բարգավաճումն Հայ Հնագույն Եկեղեցու, ամեն:

Ասյա Անգլիկան Եկեղեցու անունից ելույթ է ունենում հոգեշնորհ կանոնիկոս Վիկտոր դը Վաալը և արտասանում Ամենայն Հայոց Հայրապետին ուղղված հետևյալ սրտառուչ խոսքը.

«Ձերդ Սրբություն,

Մեռնօրհնության և Ձերդ Սրբության ծննդյան նվիրված տոնակատարությունների առիթով պատիվը և առանձնաշնորհումն ունեմ բերելու Ձեզ համայն Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիի ողջույնները:

Ս. Էջմիածնի նման Անգլիկան Եկեղեցին էլ ընծայված է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Այն Անգլիայի և համայն աշխարհով մեկ ցրված անգլիացի պտվակների մայր Եկեղեցին է:

Անգլիկան Եկեղեցին նույնպես հիմնված է մեր Գրիգոր Լուսավորչի կողմից, որին ուղարկել էին Ս. Օգոստինոսի մոտ, որպեսզի նա հաստատի այդ Եկեղեցին: Երկու Գրիգորները մեր մայր Եկեղեցիների հայրերը և հիմնադիրներն են:

Գրիգոր նշանակում է՝ արթուն, զգաստ: Եվ մեր ժամանակաշրջանում Ձերդ Սրբությունը արթուն պահակ է եղել ոչ միայն Հայաստանյայց Եկեղեցուն, այլև համայն քրիստոնեական Եկեղեցուն: Դուք ուսուցանում եք, որ այսօրվա աշխարհում պետք է ունենալ բարի սիրտ, որպեսզի այնտեղ սերմանվի Քրիստոսի խոսքը և պատգամը: Դուք ուսուցանում եք նաև վստահություն դեպի մարդը, որ նա իր հասարակական, քաղաքական և մշակութային գործունեու-

թյան բնագավառներում կարողանա կարգանալ խաղաղության ճանապարհով: Դուք խաղաղության մեծ ռահվիրա եք և խաղաղությունը տեսնում եք արդարության և սիրո մեջ: Դուք եղաք մեծ ներշնչողը խաղաղության և փոխըմբռնման, որպեսզի ամեն մի Եկեղեցի Քրիստոսի թողած ավանդությամբ իր լուման ներդնի մարդկության փրկության գործում:

Ձերդ Սրբություն, այժմ թույլ տվեք ինձ ընթերցել այստեղ Քենթրբերիի արքեպիսկոպոսի ողջույնի ուղերձը:

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ձերդ Սրբություն,

Ինձ համար մեծ հաճույք է մեռնօրինության առթիվ Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչներ գերաշնորհ Հենրի Հիլի, հոգեշնորհ Վիկտոր դը Վաալի և պրն. Պատրիկ Ջիլբերտի միջոցով հղել Ձեզ իմ ջերմ ողջույնները:

Տակավին թարմ են այս տարվա սկզբներին Լամբեթ պալատ Ձերդ Սրբության այցելությունից ստացած իմ տպավորությունները, և ես երջանիկ եմ, որ անգլիկան համայնքն ուղարկում է մի խումբ պատգամավորներ Ս. Էջմիածին՝ ձեր քրիստոնեական Եկեղեցու համար անչափ կարևորություն ունեցող մի իրադարձության առիթով:

Սրբազան մեռնի օրհնության արարողության ընթացքում վկայակոչվելու է Հայ Եկեղեցու և նրա ժողովրդի հոգևոր միությունը: Եվ մեր Անգլիկան Եկեղեցու ներկայությունը այդ արարողությանը նույնպես կվկայի ի Քրիստոս մեր միությունը՝ մեկ Եկեղեցիով և մեկ հավատով:

Ձերդ Սրբության սիրալիր եղբայր ի Քրիստոս՝

ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻ

Լամբեթ պալատ, Լոնդոն.
20 սեպտեմբերի 1983 թ.

Անգլիկան Եկեղեցու պատգամավորի սույն ելույթից հետո, խոսքը տրվում է Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ պրոֆեսոր Էռնստ Սուտներին (Ավստրիա), որը հանդես է գալիս հետևյալ ուղերձով.

«Ձերդ Սրբություն, բարձրապատիվ հանդիսականներ,

Ինձ համար պատիվ է և մեծարանք միաժամանակ, Ձերդ Սրբության եռյակ հոբելյանների առթիվ շնորհավորել և ողջույնի ու օրհնության բարի մաղթանքներ փոխանցել Ձեզ Վիեննայի արքեպիսկուպոս, Ավստրիայի եպիսկոպոսաց ժողովի նախագահ կարդինալ Ֆրանց Քյոնիգից:

Գոհություն Աստուծո, որ մենք կարող ենք հետադարձ մի հայացք գցել և տեսնել ավանդություն դարձած այն երկարատև բարեկամությունը, որը գոյություն է ունեցել ավստրիացիների և հայերի միջև:

Այսօր երկու հարյուր տարի է, ինչ Հայ Առաքելական Եկեղեցին ճանաչվել է ավստրիական իշխանության կողմից որպես ինքնուրույն կրոնական համայնք: Այդ երկարաձիգ տարիների ընթացքում շատ դեպքեր են տեղի ունեցել, որոնք մեկ առավել մերձեցրել են միմյանց: Վերջին տարիներին Ձերդ Սրբությունը անձամբ իր օրհնաբեր այցելություններով որոշակիորեն օգնեց, որ

մեր բարեկամական կապերը էլ ավելի զորանան: Այս ամենի համար կրկին սրտաբուխ շնորհակալություն Ձեզ այսօրվա տոնական առիթով:

Ավստրիայում արևելյան քրիստոնեական համայնքների գոյությունը վերջին տարիներին Վիեննայում ստեղծել է էկումենիկ մթնոլորտ՝ կամրջելով Արևելքի և Արևմուտքի քրիստոնյաներին:

Վիեննայի հայ համայնքը և նրա հոգևոր հովիվը իրենց լայնախոհությամբ շոշափելի ներդրում ունեն այդ առաջընթացում:

Աստուծո օգնականությամբ ձեռք բերված արդյունքները շատերի հավանության արժանացան:

Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալների հետ միասին, մենք՝ կաթոլիկներս նույնպես, աղոթում ենք, որ անսպառ լինի Ձերդ Սրբության ստեղծագործական եռանդը և Ձեր օրհնաբեր գործունեությունը պսակվի նորանոր հաջողություններով ի փառս ձեր Եկեղեցու: Երկար, օրհնյալ և արդյունավետ տարիներ Ձերդ Սրբությանը»:

Հանդիսավոր նիստի վերջում ելույթ է ունենում Բուլղարական Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Կիրիլ վարդապետը, որը Ամենայն Հայոց Հայրապետին է դիմում ողջույնի և շնորհավորանքի հետևյալ խոսքով.

«Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք ինձ՝ Մոսկվայում Բուլղարական Եկեղեցու ներկայացուցչիս, հանուն սրբազան Պատրիարք Մաքսիմի և Բուլղարական Եկեղեցու Ս. Սինոդի, ի սրտե ողջունել Ձերդ Սրբության ծննդյան 75-ամյակը, քահանայագործության 40-ամյակը և կաթողիկոսական գահակալության 28-րդ տարեդարձը, աղոթել և ցանկալ Ձեզ երկար տարիներ, որպեսզի քաջառողջությամբ շարունակեք Ձեր բարձր ծառայությունը՝ հոգևոր սնունդ տալով համայն հայ հավատացյալ ժողովրդին:

Այսօր մեծ և ցնծալի տոն է Հայ Եկեղեցու համար. նրա գերագույն Քահանայապետը նշում է իր նշանակալից հոբելյանը:

Ձերդ Սրբությանը նվիրված այս հանդեսին ներկա են բարձրաստիճան պետական ներկայացուցիչներ, մշակույթի և արվեստի գործիչներ, բալում քրիստոնյա Եկեղեցիների պատվիրակներ և արտասահմանյան հյուրեր: Բոլորը խոր հարգանքով և երախտագիտությամբ են լցված Ձեր նկատմամբ:

Նրանք Ձերդ Սրբությանն ուղղված իրենց երախտագիտական խոսքերով հյուսեցին հրաշագեղ մի պսակ. թույլ տվեք և ինձ այդ դրվատանքի խոսքերին և երախտագիտության պսակին ավելացնել Բուլղարական Պրավոսլավ Եկեղեցու և եղբայրական բուլղար ժողովրդի ծաղիկ-խոսքը, որպես նշան խոր հարգանքի և սիրո դեպի հայ ժողովուրդը և նրա գերագույն հոգևոր հովիվ Ձերդ Սրբությունը:

Հայ և բուլղար ժողովուրդների պատմական ճակատագրերը շատ նման են եղել միմյանց: Ծանր և ողբերգական էջեր են պահպանվում մեր ժողովուրդների տարեգրությանց մեջ: Բայց Աստուծո բարի նախախնամությունը մեր ժողովուրդներին չի թողել առանց հոգևոր առաջնորդների: Մենք կարող ենք քրիստոնեական հեզությամբ ասել. «Փառք Աստծուն՝ ամեն ինչի համար»:

Այժմ մենք խաղաղություն և արդարություն սիրող ժողովուրդների հետ միասին վկայում ենք, որ միշտ հավատարիմ կլինենք այդ սուրբ գաղափարներին: Եվ Դուք, Ձերդ Սրբություն, հանդիսանում եք միջազգային խաղաղասիրական շարժման առաջնորդներից մեկը: Դուք Ձեր անսպառ եռանդով արժանի օրինակ եք տալիս երիտասարդներին, հանուն Հիսուս Քրիստոսի՝ գործով և խոսքով արտահայտում եք խաղաղության և արդարության Ձեր բարի կամքը:

Մենք աղոթում ենք Արարչին և Խաղաղության Իշխանին՝ մեր Փրկչին ու Տիրոջը, որպեսզի իր ամենաբարի օգնությամբ ամրապնդի Ձեր հոգևոր և մարմնավոր ուժերը ի բարօրություն հայոց մեծ ազգի և բարի կամքի տեր մարդկանց:

Երկար և շնորհալի տարիներ Ձերդ Սրբությանը»:

Վեհափառ Հայրապետը կարդում է իր շնորհակալության խոսքը հանդիսավոր նիստի ժամանակ

Այնուհետև հոբելյար Վեհափառ Հայրապետը արտասանում է իր օրհնության խոսքը (տես էջ 13):

Հանդիսավոր նիստից հետո տեղի է ունենում հոգևոր համերգ, որի ընթացքում ելույթ են ունենում հոգևոր ճեմարանի սաները՝ ղեկավարությամբ Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստ Խորեն Մեյխանեջյանի, երգչախմբի մենակատարներ՝ Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստ Լուսինե Զաքարյանը և Վալերի Հարությունյանը, ինչպես նաև «Շարական» վոկալ-գործիքային նվագախումբը:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը հոգևորական և աշխարհական պատգամավորները հաջորդաբար հրաժեշտ են տալիս Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռին և մեկնում անմոռաց տպավորություններով:

Սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5 օրերին սրբալույս մեռոնի օրհնությանը և Հայոց Հայրապետի ծննդյան 75-ամյակին, քահանայագործության 40-ամյակին և գահակալության 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունները անցան հաճելի, հետաքրքրական ու բովանդակալից:

Մայր Աթոռում գտնվելու շրջանում հյուրերն այցելեցին հանրապետության տեսարժան վայրերը, եղան Գառնիում, Գեղարդի վանքում, Խորվիրապում, Սևանում, ծանոթացան մայրաքաղաքի նորակառույցներին, այցելեցին թանգարաններ և մշակութային կենտրոններ:

Համպգային այս մեծ տոնախմբություններում մի անգամ ևս հաստատապես արտահայտվեց, որ դարերի խորքից բալում փոթորիկների ու մաքառումների միջով անցնելով այսօր ապրում է հայոց ազգը և այսօր կանգուն է Հայոց Եկեղեցին, որոնց սրբական առաքելությունն է է՛լ ավելի շենացնել մայր հայրենիքը և պայքարել աշխարհի խաղաղության ու ժողովուրդների եղբայրության համար:

Բոլոր պատգամավորներն ու Մայր Աթոռի հյուրերը մեկնեցին շնորհակալական զգացումներով և անջնջելի տպավորություններով՝ իրենց հետ տանելով հայրենիքի կենսատու շունչն ու հոգին, Վեհափառ Հայրապետի օրհնությունները ու բարի մաղթանքները և Սուրբ Էջմիածնի սրբական ու անմահ խորհուրդը՝ «քանզի ի վերայ Աջոյն և Ս. Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:

Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի, քահանայագործության 40-ամյակի, և գահակալության 28-րդ տարեդարձի առթիվ Մայր Աթոռում ստացվել էին բազում շնորհավորական նամակներ, հեռագրեր և գրություններ:

Հաճույքով հրատարակում ենք այստեղ Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանի, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի և հայրենի ճանաչված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի շնորհավորական գրությունները՝ ուղղված Ամենայն Հայոց Հայրապետին;

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառ Տեր,

Մեկի համար մեծ ցավ է, որ այս առիթով կարելիությունը չունինք մասնակցելու սուրբ մեռոնի օրհնության և մասնավորաբար անձամբ Մեր մասնակցությունը բերելու Ձերդ Վեհափառության բարեբաստիկ ծննդյան 75-ամյակի, քահանայագործության քառասնամյակի և գահակալության 28-ամյակի հանդիսությանց:

Մյուս կողմե, սակայն ուրախ ենք, որ Ֆրանսայի մեր եկեղեցիներու կողմե պատգամավորություն մը՝ գլխավորությամբ Մեր ընդհանուր փոխանորդին՝ գերաշնորհ Տ. Գյուտ եպս. Նազգաշյանի, պիտի ներկայացնե Մեր և Ֆրանսայի մեր ժողովուրդին բարեմաղթությունները այս առիթով:

Վեհափառ Տեր, վստահ եղեք, որ մենք հեռվեն կմասնակցինք այդ փառավոր հանդիսություններուն և մտքով ու հոգիով, ինչպես միշտ, այս առիթով ևս Ձեզի հետ ենք:

Մեկի համար Դուք Աստուծո կողմե տարիներե ի վեր այդ պաշտոնին հարմար փնտրված և պատրաստված անձնավորություն մըն եք:

Ներեցեք Մեկի հիշել դրվագ մը, որ խորապես տպավորած է Մեզ և միշտ ալ տեղ գրաված է Մեր մտքին մեջ:

1936—1938 թվականներուն, երբ հայրենիքը դժվարին օրեր կանցներ, և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը անշքացած և գրեթե լքված վիճակի մեջ կգտնվեր, արտասահմանի հայությունը մտահոգ, հուսախաբ և տագնապալից շրջան մը կանցներ՝ ի տես և ի լուր այդ տխուր վիճակին:

Այդ շրջանին, ամերիկացի ազգայիններեն մեկը, մտահոգ այդ վիճակեն, կներկայանա այդ ժամանակվա ամերիկահայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցին և մասնավորաբար իր մտահոգությունները կհայտնե անոր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այդ տխուր վիճակին համար և կըսե. «Ի՞նչ պիտի ըլլա Էջմիածինը, ո՞վ պիտի ըլլա անոր ապագա գահակալը»:

Երջանկահիշատակ Գարեգին արքեպիսկոպոս, իրեն հատուկ լավատեսությամբ և մարգարեական շունչով, խաղաղ և անվրդով հոգիով մը կպատասխանե. «Զավակս, մի՛ մտահոգվիր, մեր հայրերուն Աստվածը այս վայրկյանեն իսկ կփնտրե և կպատրաստե իր ներկայացուցիչը և Սուրբ Էջմիածնի գահակալը»:

Մարգարեական այս արտահայտությունը իսկապես իրականացավ 1955 թվականին, երբ ամբողջ հայության ներկայացուցիչները, հավաքված Սուրբ Էջմիածնի դարավոր գմբեթին տակ, Աստուծո կամքով Ձեզ ընտրեցին որպես կաթողիկոս Ամենայն Հայոց և արժանավոր հաջորդը Սուրբ Գրիգոր Լուսավորչին ու անոր հավատավոր հաջորդներուն:

Այդ թվականեն սկսյալ կարծեք նոր և լուսավոր դարաշրջան մը բացվեցավ մեր Եկեղեցիին և մեր ժողովուրդին համար առհասարակ: Մինչ այդ, Դուք գրեթե անծանոթ մըն էիք ընդհանրապես Եկեղեցվո ղեկավար շրջանակին: Բայց առաջին իսկ վայրկյանեն Ձեր տպավորող անձնավորությունն ու իմաստուն վերաբերմունքը արդեն գրաված էին ամենուն ուշադրությունը: Ու երբ օծվեցաք և լեցվեցաք աստվածային շնորհներով, այլևս ամեն հայ Ձեր մեջ գտավ ատենին՝ լուսահոգի Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի մարգարեական հայտնությունը:

Կարիք չկա մանրամասնորեն անդրադառնալու Ձերդ Վեհափառության 28 տարիներու այնչափ արդյունաշատ, եկեղեցաշեն և ազգօգուտ գործունեության:

Միայն կուզենք շեշտել, որ 300 տարիներն ի վեր, Դուք եղաք Հայոց Հայրապետներեն առաջինը, որ կարելիությունն ունեցավ, հովվական ցոպ ի ձեռին, այցելել աշխարհացրիվ իր հոտին:

Դուք եղաք այն ոսկյա կամուրջը, որ միացուց Մայր Հայրենիքը և արտասահմանի հայությունը: Արտասահման տված Ձեր բազմաթիվ այցելություններով տարածեցիք հայության մեջ Սուրբ Էջմիածնի խորհուրդը և Մայր Հայրենիքի սերը:

Մինչև բարեբաստիկ Ձեր գահակալությունը, այս իրողությունները, առհասարակ արտասահմանի հայության համար, խորհուրդ և երազներ էին միայն: Դուք, Ձեր անձնավորությամբ և հայրապետական պատգամներով, կանոնք իրականության վերածեցիք, և արտասահմանի հայությունը զգաց և ապրեցավ անոնց դերն ու արժեքը իր աշխարհացրիվ և պանդուխտ կյանքին մեջ և ամուր կապերով կապվեցավ այդ իրականությանց:

Այս 28 տարիներու ընթացքին, Ձեր անձի հմայքով և հանգամանքով, ապահովեցիք արտասահմանի սիրտը, անոնց նյութական օժանդակությամբ ու հայրենի կառավարության բարյացակամության շնորհիվ, պայծառացուցիք մեր եկեղեցիները, վերանորոգեցիք ու շինցուցիք վանքերը և հոգևոր նոր շունչ մը ծավալեցիք ամբողջ հայ ժողովուրդին մեջ ի Հայաստան և հարտասահման:

Կազմակերպչական Ձեր շնորհներով ամբողջ արտասահմանի հայությունն ու եկեղեցիները Ձեր հմայքով կապեցիք Մայր Աթոռին, հայրենիքին և Սուրբ Էջմիածնին:

Անշուշտ Ձեր այս ազգօգուտ ձեռնարկներուն մեջ դժվարություններ ունեցաք, բայց Ձեր քրիստոնեական լայնախոհությամբ և իմաստությամբ կրցաք հաղթահարել կանոնք, և հայրական սիրով ու ներողամտությամբ գործնականապես եղաք Ամենայն Հայոց Հայրապետը գրավելով ամենուն սրտերն անխտիր:

Տակավին չենք անդրադառնար Ձեր այնչափ արդյունավոր շինարարական գործունեության, մասնավորաբար Սուրբ Էջմիածնի մեջ, ուր վերանորոգումներուն վրա դրիք Ձեր արվեստագետի ճաշակն ու կնիքը: Այդպեսով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, իր ամբողջ կազմով, արդարացիորեն կեդրոնը եղավ ոչ միայն մեր ժողովուրդին, այլ նաև օտար եկեղեցական իշխանությանց և այցելուներուն համար:

Մենք Ձեր գահակալության շրջանը չենք համարձակիր որակել կամ սահմանել որևէ բառով մը. բայց վստահ ենք, որ Դուք պատմության պիտի անցնիք որպես մեր **մեծ և շինարար կաթողիկոսներեն մեկը:**

Վեհափառ Տեր, ջերմորեն կշնորհավորենք Ձեզ Ձեր եռյակ տարեդարձներուն առթիվ և կըսենք ու կմաղթենք ամբողջ սրտով. «Զի շնորհեսցէ Ձեզ Տէր ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ»:

Փարիզ,
20 սեպտեմբերի 1983 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառ Տեր,

Այս օրերուն դարձյալ կինչեն Սուրբ Էջմիածնի դարավոր ու սրտահույզ զանգերը՝ համայն աշխարհի հայության հոգիները և նայվածքները սևեռելով դեպի Մայր Աթոռ, ուր հանդիսավոր իրադրության մեջ կնշվին Վեհափառությանդ ծննդյան 75-ամյակն ու բարեդեպ գահակալության 28-րդ տարեդարձը,

մինչ հոգեպարար արարողություններով կօրհնվի ավանդական սրբալույս մյուռոնը: Այս բոլորը կկուգադիպին Ձեր քահանայության 40-ամյակին:

Ձեր գահակալությունը շինարարության ու վերելքի նոր ոսկեդար մը հանդիսացավ Մայր Աթոռի հարուստ պատմության մեջ. այնքան լուսավորություն ու կառուցում ստեղծվեցավ Սուրբ Էջմիածնի շրջափակին մեջ, որ կարծեք մեր նախահայրերուն հոգիները իջան այնտեղ ու Ձեր հայրապետական բարի հայացքին տակ վերականգնումի անդուլ աշխատանքի մը անցան՝ վրեժը առնելու համար կորսված դարերու ավերներուն:

Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանը մեր եռամեծ հայրապետներուն շարականներով ցնծացուցին ու կենսավորեցին մթնոլորտը Սուրբ Էջմիածնի:

Վեհափառությանդ բարի համբավն ու սրտի ջերմ խոսքը տարածվեցան ամբողջ աշխարհի երեսին ցրված հայության՝ անոր սիրտը թրթռացնելով ապգաշունչ սարսուռներով:

Հայրենիք և Սփյուռք եկան երկյուղածությամբ մատչիլ Ձեր հայրապետական Աջին: Սփյուռքի հայության պատկառանքը բալմասյատկվեցավ հայրենի ժողովուրդին սրտագին նվիրումով ու հայրենի պետության ակնածալիր վերաբերումով Վեհիդ հանդեպ:

Մեզի համար պատմական վկայություն էր Ձեր առաքինապարդ անձին մեջ տեսնել ճառագայթումը միասնականության խորհուրդին: Ձեզմով է, որ նոր ժամանակներուն հայ ժողովուրդը փարեցավ մեկ ապգ, մեկ հայրենիք և մեկ Եկեղեցի սկզբունքին, որուն լուսավոր խորհրդանիշը հանդիսացաք Դուք միշտ:

Այս տոնախմբությանց առիթով Էջմիածնի դողանջները պիտի հասնին ամենեն հեռավոր անկյունները աշխարհի՝ մեր տարահալած հայ բեկորներուն հաղորդելու համար Սուրբ Էջմիածնի ցնծությունն ու փառքը: Մեր ապգը ամբողջ կմիանա այսօր, Վեհափառ Տեր, իր սրտի խորերեն երկյուղածությամբ ողջունելու Ձեր կյանքին այս թանկագին երեք հանգրվանները:

Էջմիածինը պետք ունի տակավին Ձեզի. պետք ունին Ձեզի Հայաստանն ու ամբողջ հայությունը:

Ձեզի կմաղթենք ուժ, կորով և անհուն արնջատություն, որ շարունակեք Ձեր սրբական առաքելությունը պատմության լուսավոր ուղիներուն վրա:

Մատչելով ի համբույր Սուրբ Աջույդ, կմնանք որդիական խորունկ ակնածանքով՝

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սադդլ-Բրուք,
20 սեպտեմբերի 1983 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Սիրելի Վեհափառ,

Ինձ համար միաժամանակ մեծ պատիվ է և հաճույք ողջունել Ձեր ծննդյան 75-ամյակը:

Գլխավորելով Հայ Առաքելական Եկեղեցին և մեծ պատասխանատվությամբ կատարելով Ձեր վրա դրված պաշտոնական պարտականությունները, Դուք

միևնույն ժամանակ հսկայական եռանդով ու հավատով տարածում եք ողջ հայ ժողովրդի մեջ խաղաղության ակնիվ գաղափարները: Մեր մտավորականության կողմից բարձր է գնահատվում նաև այն ուշադրությունը, որ Դուք ցուցաբերում եք Հայաստանի պատմական հուշարձանների վերականգնման և գեղեցկացման նկատմամբ:

Ձեր ակնվությունը, հայրենասիրությունը և նվիրվածությունը հայտնի են բոլորին:

Մաղթում եմ Ձեզ ամուր առողջություն և երկարակեցություն:

Ձեզ մեծապես հարգող՝

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երևան,
19 սեպտեմբերի 1983 թ.

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Թանկագին Վեհափառ,

Թույլ տվեք սեպտեմբերի 20-ին, Ձեր ծննդյան բարեբեր օրը, իմ սրտագին շնորհավորանքները միացնել աշխարհի չորս ծագերից Ձեզ հղվող երախտագիտության և շնորհավորանքի խոսքերին:

Թող, որպես փոխվարձատրություն, մշտապես Ձեզ վրա լինի մեր աշխարհասփյուռ ժողովրդի հավաքական օրհնությունը՝ մեն ու միակ մի մաղթանքով, որ Ձեր վաստակաբեռ կյանքի երեք քառորդ դարը, որքան կարելի է, առավել հասնի իր փառավոր լրումին:

Երևան,
21 սեպտեմբերի 1983 թ.